Գոռում էին, ճվում էին, չէի հասկանում... հետո լսեցի, որ գոռում են՝ «Սամվել վարչապետ»: Է հա՝ վարչապետ, վարչապետ, թող լինի վարչապետ, ինչ ա եղել: Ես անգամ թուրքի կանանց հետ եմ ինձ մակարդակով պահել, վերջում թուրքերը շնորհակալություն են հայտնել, որ բաց եմ թողել, գնացել են, ինց կարամ հայ կնոջը քաշքշեմ:

Կարդացեք՝ էջ 4

Վահագ, դու ոնց որ Պանիկովսկին լինես. սա՝ Օստապ Իբրահիմովիչին, սա՝ ինձ, սա՝ Բալագանովին, սա՝ Կոզլեւիչին... Այ տղա, 21-րդ դարում ո՞վ է այդպես քվեներ հաշվում: Տպավորություն է ստեղծվում, որ սովետի ժամանակվա խանութպանի «չոտկով» ես հաշվել՝ հաց, պանիր, կարագ, մարագ, կես կիլո միս, 2 մածուն՝ ութ ու հիսուն:

Կարդացեք՝ էջ 5

Անցած անգամ ընտրողների տարբերությունը հարյուրքանիս է եղել, որը տեխնիկական վրիպակ է, այս անգամ 18 հազար է, իրենք էլ իրենց բերանով ասում են՝ գաղտնի ցուցակ կա: Նոր հասկացություն է՝ 1 տոկոսից ավել: Պետք է բացատրել բոլորին, որ ընտրությունները կեղծված են, գողացված են, եւ չտխրել, չընկճվել ամեն քվեի համար:

Կարդացեք՝ էջ 6

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 93 (4228), 11 հունիս, հինգշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Ռուսաստանի՝ հայ տնտեսվարողների նկատմամբ կիրառված սանկցիաներից հետո Փաշինյանը հայտարարեց, թե արտահանման այլընտրանքային շուկաներ են փնտրում, տարբեր երկրների հետ բանակցում ու ՌԴ-ից մերժված ապրանքների առաջին խմբաքանակներն արտահանել են: Հայտնի է, որ մեկ ամսից ավելի է՝ Ռուսաստանը սահմանափակումներ է մտցրել Հայաստանից մի շարք գյուղմթերքների եւ այլ ապրանքների ներմուծման նկատմամբ: Քարոզարշավի վերջին օրերին Փաշինյանը հայտարարեց, որ հայկական վարդերի եւ բանջարեղենի առաջին խմբաքանակներն արդեն արտահանվել են դեպի նոր, այլընտրանքային շուկաներ եւ նոր ուղղություններ, հատկապես՝ Եվրամիության անդամ կամ ԵՄ ձգտող երկրներ: Փաշինյանը վստահեցրեց, որ տեղական արտադրանքի իրացման ճգնաժամ չի լինի, եւ ոչ մի ապրանք չվաճառված չի մնա: Ասաց, որ երկրների անունները՝ ավելի ստույգ, կիրապարակվեն ապրանքի տեղ հասնելուց հետո: Սակայն իշխանական շրջանակներից տեղեկացանք, որ արտահանված ապրանքները փոքրիկ, եթե չասենք՝ սիմվոլիկ քանակի են, չեն կարող որպես այլընտրանքային շուկա փոխարինել ԵԱՏՄ-ին: Հենց այս հանգամանքով է պայմանավորված, որ այլեւս այդ մասին չեն խոսում եւ անգամ արտահանված ապրանքների ցանկ ու քանակ չեն հրապարակում: Իշխանական շրջանակներում անհանգիստ են, որ առաջիկայում գյուղմթերքի իրացման լուրջ խնդրի առաջ են կանգնելու, եւ հասկացել են, որ պոռոտախոսությունը, թե ռուսական սանկցիաներն ավարտվելու են հունիսի 8-ին, շատ հեռու է իրականությունից:

Իշխանությունը հետընտրական «չիստկա» է անում պետական գերատեսչություններում: ՔՊ-ի հունիսի 5-ի ամփոփիչ հանրահավաքին մոբիլիզացրել էին վարչական ռեսուրսը, հրահանգ իջեցրել պետական աշխատողներին, որ բոլորն առանց բացառության մասնակցեն Հանրապետության հրապարակի հանրահավաքին: Ընդ որում՝ զգուշացրել էին, որ շուտ չծլկեն, մնան մինչեւ վերջ, քանի որ վերակացուներ են նշանակված, որոնք ստուգելու են՝ ներկա-բացակա են անելու: Մեզ ասացին, որ վերակացուներն արդեն քանի օր է՝ պարզաբանումներ են պահանջում այն աշխատակիցներից, որոնք հանդգնել են հանրահավաքին չգնալ կամ գնացել են եւ շուտ հեռացել: Ասում են՝ յուրայինների եւ ընդդիմադիրների ցանկեր են կազմում, որ հետագայում ինչ-որ քայլեր արվեն: Որտեղ անգրագետ ու իր իրավունքները չիմացող աշխատող լինի, ստիպեն դիմում գրել գնալ, այլ տեղերում պարգեւավճարներ չտալով պատժել եւ այլն: Բայց եթե մարդիկ մի փոքր դիմադրություն դրսեւորեն, ոչ մի բան չի հաջողվի անել:

Նոր խոսք

Սոցիոլոգները մազերն են պոկում, քաղաքագետները՝ ուսերը թոթվում, քաղտեխնոլոգները տարակուսած իրար դեմքի են նայում, եւ ոչ ոք չի կարողանում բացատրել, թե ինչպես ստացվեց, որ ընտրությունների նախօրեին հազիվ 30 տոկոս ձայն եւ մոտ 70 տոկոսի հասնող հակառեյտինգ ունեցող Նիկոլ Փաշինյանը կարողացավ հաղթել հունիսի 7-ի ընտրություններում եւ պահել իշխանությունը: Ոչ մի գիտական, տրամաբանական, քաղաքագիտական տվյալ նախապես չէր հուշում նման ելքի հավանականությունը: Մենք, իհարկե, տեսնում էինք, թե ինչ խայտառակ քայլերի է գնում իշխանությունը՝ վերարտադրվելու համար: Էլ պետբյուջեից բաշխվող ընտրակաշառք, էլ հազար ու մի որոշում՝ ընտրողի սիրտը շահելու համար, էլ խայտառակ ճնշումներ, տասովշչիկների, պետական ու համայնքային ծառայողների մոբիլիզացիա, գյուղերում ապրողների, իշխանությունից կախում ունեցողների նկատմամբ սպառնալիքներ, վախի մթնոլորտ: Էլ չեմ խոսում քրեական վարույթների, ձերբակալությունների, ընդդիմադիր ուժերին վարկաբեկելու, ամենամեծ ուժի առաջնորդին եւ ակտիվ ընդդիմադիր գործիչներին կալանքի տակ պահելու մասին: Բայց անգամ այդ ամենով հանդերձ, բոլոր փաստերը վկայում էին այն մասին, որ ընտրությունների արդյունքում ՔՊ-ն չի կարող 49 տոկոս ձայն ստանալ: Եվ միայն ընտրությունների օրվա ու դրան հաջորդած հաշվարկի ժամանակ հասկանալի դարձավ, որ այս ընտրություններին իշխանությունը կիրառել է նախորդ ժամանակների բոլոր զեղծարարությունները՝ անգամ թվեր նկարելն ու արձանագրությունների տվյալները փոխելը: Իսկ ուղիղ հրահանգի ձեւով՝ գիշերվա ժամը 2-ին ասուլիս անելն ու մշակված 10 տոկոս քվեաթերթիկների տվյալների հիման վրա «ես արդեն ընտրվել եմ» հայտարարելը լրիվ նոու-հաու է՝ Փաշինյանի անձնական ներդրումն ընտրությունների պատմագրության մեջ:



Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանը շարունակում է հաշվեհարդարն այն ենթակաների հետ, որոնք «իր պատիվը գետնով են տվել»՝ Գորիսում ՔՊ-ի ջախջախիչ հաղթանակ չեն ապահովել: Նա պատասխանատուներ էր նշանակել տեղամասերում, որոնք վստահեցրել էին, որ ամեն ինչ կարգին է՝ ՔՊ-ն «կրում է, ընդդիմությանը սատկացնելու են»: Ընտրության գիշերը մեծ անակնկալ են եղել ՔՊ-ի ցածր տոկոսները, եւ Առուշն աշխատանքից ազատել է իր տեղակալ Արտյոմ Աղաջանյանին, խորհրդական Կարեն Ջավահիրյանին, օգնական Գրիգորին, Խնձորեսկի վարչական ղեկավարին: Մեր աղբյուրն ասում է, որ սրանով նա չի բավարարվելու՝ մյուսներին ազատելու է, երբ հետընտրական կրքերը հանդարտվեն: Ասել է, որ պատժելու է իրեն խաբողներին: Իսկ որ ինքը խաբել է հանրության, ընդդիմության սպասելիքները, ճամբարափոխ է եղել, դա չի հիշում:

ՆՈՐ ԴԵՄՔԵՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Չնայած ՔՊ-ականները հունիսի 7-ի արդյունքները որպես մեծ հաղթանակ են ներկայացնում եւ պարծենում, թե իբր ջախջախել են «եռագլուխ հրեշին», սակայն ՔՊ-ի ներսում, մեղմ ասած, անկումային տրամադրություններ են. ՔՊ-ականները հասկանում են, որ գործադրված ջանքերի ու այսքան խախտումների պարագայում մեծամասնություն չստանալը համազոր է պարտության: Իսկ եթե ընդդիմությունը չվերցնի մանդատները, ապա լեգիտիմության խնդիրներ են ունենալու, եւ եթե ոչ այսօր, ապա վաղը՝ աշխարհաքաղաքական թեթեւ մակընթացությունների պարագայում իրենց մատնացույց են անելու միամանդատ խորհրդարանի ու ժողովրդավարությունից նահանջի փաստը: Ի դեպ, ՔՊ-ում վստահ են, որ իրենց ցուցակի մինչեւ 90-րդ համարը կմտնի խորհրդարան, քանի որ առնվազն 25-30-ը կգնան գործադիր: Այնպես որ, ԱԺ ՔՊ ֆրակցիայում նոր դեմքեր կհայտնվեն: Ասենք, ՔՊ աշխատակազմի որոշ աշխատակիցներ են պատգամավոր դարձել՝ Լեւոն Լեւոնյան, Արաքսյա Վարդանյան, Գյումրու ավագանուց՝ Քնարիկ Հարությունյան, Արագածոտնի փոխմարզպետ Միլադա Հովհաննիսյան, նրա եղբայրը՝ վարչապետի աշխատակազմի աշխատակից Սուրեն Հովհաննիսյանը: Ֆեյքերի ՊՈԱԿ-ի ղեկավար Տարոն Չախոյանն է ԱԺ գնում, Հայկ Կոնջորյանի օգնական, Երեւանի ավագանու անդամ Նատալյա Սինորյանը, Գյումրու չկայացած քաղաքապետ Սարիկ Մինասյանը, Կոջոյանի անվան դպրոցի տնօրեն Ռուզաննա Երեմյանը, եթե տնօրենի պաշտոնը չնախընտրի, ՀՊՄԿ-ում կառավարության ներկայացուցիչ Նարեկ Բաբայանը եւ այլք: Եթե ԲՀԿ-ն անցնի խորհրդարան, ապա ՔՊ-ն կունենա 61 պատգամավոր:

ՄԱՆԴԱՏ

Խորհրդարանական ընտրություններից հետո քաղաքական թիվ մեկ օրակարգային հարցը ընդդիմության՝ մանդատներ վերցնել-չվերցնելու հարցն է: Ֆեյսբուքյան ակտիվ հանրույթը մի քանի օր ագրեսիվ ու կոշտ պահանջներ է հնչեցնում՝ խորհրդարան անցած երկու ուժի առաջնորդներին ուղղված, Սամվել Կարապետյանից ու Ռոբերտ Քոչարյանից պահանջում է չվերցնել մանդատները, չլեգիտիմացնել, իրենց

ՎԵՐՑՆԵ՞Լ, ԹԵ՞Ղ ՉՎԵՐՑՆԵԼ ՄԱՆԴԱՏՆԵՐԸ. ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԽՏՈՐՈՇ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ Է



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

իսկ բնորոշմամբ՝ կեղծիքներով անցած ընտրությունները, չդառնալ Ալիեւի պահանջները կատարող խորհրդարանի մաս եւ այլն, անգամ հոխորտում են, թե իրենք դրա համար քվե չեն տվել ընդդիմությանը:

Ընդդիմության շարքերում, կարելի է ասել, քար լռություն է, մեկ-երկու հերթապահ հայտարարություն, որ ԿԸՀ հրապարակած տվյալները չեն արտացոլում իրականությունը, եւ հետամուտ են լինելու խախտումները բացահայտելուն, ուրիշ ոչինչ: Տեղեկություններ կան, որ ընտրություններից հետո ընդդիմադիր թիմերը պարբերաբար համատեղ քննարկումներ են ունենում՝ մանդատներ վերցնել-չվերցնելու նպատակահարմարության հարցով, վստահեցնում են, որ համատեղ ու միասնական դիրքորոշում է կայացվելու վերցնել-չվերցնելու հարցում, եւ սպասում են ԲՀԿ-ի հարցի լուծմանը. եթե Գագիկ Ծառուկյանի առաջնորդած ուժը վերահաշվարկի արդյունքում այնուամենայնիվ անցնի խորհրդարան, ապա ընդդիմության շարքերում հակված են վերցնել մանդատները, քանի որ Փաշինյանի իշխանությունն այդ պարագայում զրկվում է 3/5-ի մեծամասնությունից, ինչը նրան կզրկի սահմանադրական օրենքներն ու անկախ մարմինները միանձնյա ձեւավորելու հնարավորությունից:

Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստանի» առաջին համար Նարեկ Կարապետյանն իր լայվում ըստ էության խոսեց այդ մասին. սպասում են ձայների վերահաշվարկի արդյունքներին, որպեսզի հասկանան՝ արդյոք «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կմտնի՞ Ազգային ժողով, թե՝ ոչ, որից հետո հանդես կգան հայտարարությամբ: «Վերահաշվարկի արդյունքում կիմանանք՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն Ազգային ժողով մտնո՞ւմ է, թե՞ չէ: Կհասկանանք՝ Ազգային ժողովում հնարավորություն կունենա՞ գլխավոր դատախազ եւ այլ պաշտոնյաներ ընտրելու ժամանակ ընդդիմությունն իր խոսքն ասի, որից հետո պարզ կլինի՝ ԱԺ-ն կունենա գործիքակազմ՝ դեմ կանգնելու ապօրինություններին, քանի որ այս անգամ իշխանությունը շատ մանդատներ է կորցրել: ԲՀԿ-ի տարբերակին ենք սպասում, որից հետո հանդես կգանք հայտարարությամբ»,- ասաց Կարապետյանը եւ հավելեց. «Եթե կարողացանք այնպես անենք, որ դատարաններում նախագահներ նշանակվելուց ընդդիմության ձայնը հաշվի առնվի, հավասարակշռելու է, եւ քաղբանտարկյալների հարցը փորձելու ենք այդպես լուծել: Եթե տեսնենք, որ արդյունք չի լինելու, հանդես կգանք հայտարարությամբ»: Խոսելով իշխանափոխության հնարավոր ուղիների մասին՝ Կարապետյանը նշել է 2 տարբերակ. ընտրություններ եւ սահմանադրական ճանապարհով փողոցային պայքար:

«Փողոցային պայքարի արդյունքում պետք է ԱԺ պատգամավորների մեծամասնությունը քվեարկի փոփոխության օգտին: Այսօր պատմականորեն ընդամենը 8 պատգամավոր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից եթե փոխի իր դիրքորոշումը, Փաշինյանը կորցնում է աթոռը: Իհարկե, ընտրություններից հետո դա բարդ է, բայց Հայաստանի 5 տարվա ընթացքում մենք մեծ հնարավորություն կարող ենք տեսնել այդտեղ»,- նշեց Նարեկ Կարապետյանը:

Փաստաբան **Հովհաննես Խուդոյանի** կարծիքով, նոր ձեւավորվող խորհրդարանն էականորեն տարբերվելու է նախորդներից, հատկապես՝ եթե ԲՀԿ-ի մուտքն էլ ապահովվի այնտեղ, ուստի, իր խոսքով, ճիշտը մանդատները վերցնելն է. «Քաղաքական նպատակահարմարության առումով գնահատական տալ չեմ կարող, բայց մասնագիտական կարծիքս այն է, որ իմաստ ունի մանդատները վերցնել, մանավանդ՝ երբ ԲՀԿ-ն անցնում է: Քանի որ այդ պարագայում այս իշխանությունը զրկվում է բազում գործիքներից՝ սահմանադրական օրենքներ ընդունելու, մարմիններ ձեւավորելու տեսանկյունից: Իհարկե, կարելի է քննարկել, որ հետագայում կարող են մարդ գողանալ, փորձել իրավիճակ փոխել, բայց որ իրավիճակն այն է, որ իրենք չեն կարողանալու առանցքային պաշտոններում մարդ նշանակել, սահմանադրական օրենքներ փոփոխել, փոխում է իրավիճակը: Եթե այս պատկերն ունենայինք 2021 թվականից հետո, ապա այս իրավիճակը չէինք ունենա. եւ դատական համակարգի ողնաշարը ջարդելը, եւ ՍԴ-ի դեմ գործընթացը, եւ ընտրական հանձնաժողովների ձեւավորումը չէին կարող անել: Հիմա եթե գործիքը ստեղծվում է եւ հնարավորություն է տալիս գոնե մյուս համապետական ընտրությունների համար կիրառել, ապա պետք է օգտվել դրանից՝ անկախ նրանից, թե ԱԺ-ում քաղաքական բովանդակությունը ողջունելի կլինի, թե խնդրահարույց»: Հովհաննես Խուդոյանը, պատասխանելով այն պնդումներին, որ Փաշինյանին ոչինչ չի խանգարի գլխավոր դատախազի տեղապահ կամ Վերաքննիչ դատարանի նախագահի պարտականությունները կատարող նշանակել, որոնք մինչեւ իր իշխանության վերջը կարող են ԺՊ-ի կարգավիճակում աշխատել, ասաց, որ ժամանակավոր պաշտոնակատար կարելի է նշանակել միայն գլխավոր դատախազի դեպքում, մյուս պաշտոնների պարագայում ներկայիս օրենսդրությունը չի տալիս նման հնարավորություն: «Կոլեգիալ մարմինների պարագայում կլինի ՍԴ, ԿԸՀ եւ այլն, այդ տարբերակը՝ ԺՊ-ի ինստիտուտը չի աշխատելու: Երկրորդ կարեւոր հանգամանքը, որ մանդատները վերցնելն անհրաժեշտ է նաեւ այն պատճառով, որ ԸԸՀ-ներում ներկայություն ապահովեն: Եթե պատկերացնենք, որ հաջորդ ընտրություններում ընտրատեղամասերը բացառապես իշխանականներից են կազմված, ապա կարելի է հավերժ մոռանալ իշխանափոխության մասին»,- ասաց Խուդոյանը՝ հավելելով, որ, ի վերջո, Վրաստանի օրինակը մեզ ցույց տվեց, թե որքան անօգուտ է այդ ճանապարհով գնալը. «Սահմանադրական, օրենսդրական առումով մանդատներից հրաժարվելը որեւէ խոչընդոտ չի առաջացնելու ՔՊ-ի համար: Եվ, ի վերջո, ինչպես Արամ Օրբելյանն է իր այս թեմայով հարցազրույցում նշել՝ եթե ընդդիմությունը չգնա պառլամենտ, ոչինչ չի խանգարի Նիկոլ Փաշինյանին հայտարարելու, որ մենք հարյուր տոկոսանոց մեծամասնություն ունենք»:

ԵԹԵ ՉՎԵՐՑՆԵՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԸ, Ի՞ՆՉ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ԲԱՑԻ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մեր զրուցակիցը քաղաքագետ **Հակոբ Բադալյանն** է:

- Ընտրությունների արդյունքների հրապարակումից անմիջապես հետո մի հարց է քննարկվում՝ վերցնի՞ ընդդիմությունը մանդատները, թե՞ չվերցնի: Մի մասը կարծում է, որ ընդդիմադիր ուժերը պետք է հրաժարվեն մանդատներից, մյուս մասը, հղում անելով հարեւան Վրաստանի օրինակը, որ ընդդիմության՝ մանդատներից հրաժարվելը ոչինչ չփոխեց իշխանության օրակարգում, կարծում է, որ ճիշտը մանդատները վերցնելն ու պայքարի նոր փուլ մտնելն է: Ձեր կարծիքով՝ ո՞րն է ճիշտ:

- Եթե քննարկվում է այդ հարցը, ապա պետք է պատասխանը փնտրել հետեւյալ դաշտում. վերցնել՝ ինչի՞ համար, չվերցնել՝ ինչի՞ համար: Ենթադրենք, չեն վերցնում մանդատները, ի՞նչ են ստանում, բարոյական հաղթանակից բացի, ի՞նչ է դա տալու, սակայն եթե վերցնում են մանդատները, ապա պետք է ասեն, թե ինչպես են աշխատելու հետագայում: Այս հարցերն են ամենակարեւորը, այլ ոչ թե զուտ մանդատ վերցնել կամ չվերցնելու հարցը: Ընտրություններից հետո մանդատները վերցնելու թեման զգալիորեն իներցիոն է նախորդ ընտրական ցիկլից եւ նաեւ որոշակիորեն պարունակում է շահագրգիռ որոշակի շրջանակների մոտիվներ, որոնք պատրաստվում են ներընդդիմադիր պայքարի նոր ցիկլին: Ընդդիմադիր դաշտում առաջատար դիրքերի պայքարի մոտիվներն է ներառում իր մեջ այս հարցը: Այն հետապնդում են անգամ ընտրություններին չմասնակցած որոշ ուժեր:

- Օրինակ, որոշ ընդդիմադիր շրջանակներ պնդում են, որ եթե ընդդիմությունը վերցնի մանդատները, դրանով կլեգիտիմացնի կեղծված ընտրությունների արդյունքները եւ կկիսի պատասխանատվությունը, եթե կրկին տարածքներ հանձնվեն Ադրբեջանին ու Հայաստանի շահերի դեմ գործողություններ արվեն:

- Դրանք մեխանիկական գնահատականներ են, իմ կարծիքով՝ դրանք քաղաքական իրավիճակի հանդեպ կամ անհամարժեքության դրսեւորումներ են, հիմնականում՝ էմոցիոնալ եւ իրավիճակային դաշտում գտնվող, կամ էլ ունեն խորքային մոտիվներ, օրինակ՝ թիրախի տակ դնել այսօր ընդդիմադիր դաշտում եղած առաջատար ուժերին՝ հավակնելով նրանց հետին պլան մղել, նրանց նկատմամբ հանրային վստահությունը նվազեցնել եւ արդեն սեփական ներկայությամբ լրացնել այդ բացը: Այս երկու տարբերակներից մեկն է: Մանդատները կվերցնեն, թե չեն վերցնի, դրանից Նիկոլ Փաշինյանի լեգիտիմությունը ոչ ավելանալու է, ոչ էլ պակասելու է: Մանդատները վերցնելու հարցը ճիշտ կանեն՝ այս հարթության վրա դիտարկեն. վերցնելու պարագայում ավելանալո՞ւ է ընդդիմության աշխատանքը, թե՞ պակասելու է:

- Շատերն ակնկալում են, որ ընդդիմությունը դուրս գա փողոցային պայքարի: Կամ նման հանրային պահանջ, գուցե հանրությունն ընդդիմությանն է սպասում: Այժմ, Ձեր կարծիքով, կամ փողոցային պայքարի անհրաժեշտություն:

- Ընդհանրապես, փողոցները ողողվել են այս ընթացքում մի քանի անգամ, բայց մենք տեսել ենք, որ դա չի տվել որեւէ կոնկրետ արդյունք, եւ իշխանությունը չի հեռացել: Փողոցը պետք է լինի համակարգային աշխատանքի շարունակություն: Փողոցում ընդամենը արտահայտվում է իրավիճակի փոփոխությունը, բայց փողոցում իրավիճակ չի փոխվում, իրավիճակը պետք է փոխել հասարակական, քաղաքական ետնաբեմերում, ինչը կկապիտալիզացվի փողոցում, հակառակ պարագայում՝ փողոցն ինքնին քաղաքական իրավիճակ փոխելու միջոց չէ:

Ընդդիմությունը հաղթել է Ներքին Խնձորեսկում

Գորիսի քաղաքապետ՝ նախկին ընդդիմադիր Առուշ Առուշանյանը ընտրությունների հաջորդ օրը «վենդետա» է սկսել, քանի որ Գորիսում «Ուժեղ Հայաստանը» գրանցել է ավելի բարձր արդյունք՝ 5 հազար ձայն, քան ՔՊ-ն: Գրել էինք, որ Գորիսի քաղաքապետարանի մի շարք աշխատակիցներ են արդեն աշխատանքից ազատվել, օրինակ՝ համայնքապետի տեղակալ Արտյոմ Աղաջանյանը, նրա խորհրդականն ու օգնականը, ինչպես նաեւ՝ Ներքին Խնձորեսկի վարչական ղեկավար Արամ Արզանյանը: Պարզվում է, որ Առուշանյանն իշխանություններին խոստացած է եղել 60-70 տոկոս ձայն բերել, սակայն չի ստացվել: Օրինակ՝ Ներքին Խնձորեսկում ՔՊ-ն խայտառակ պարտություն է տարել, իսկ ընդդիմադիր ուժերը միասին բավականին շատ ձայներ են հավաքել, ՔՊ-ն ընդամենը 61 ձայն է ստացել, «Ուժեղ Հայաստանը»՝ 49, «Լուսավոր Հայաստան»-ը՝ 64, «Հայաստան» դաշինքը՝ 21, ԲՀԿ-ն՝ 8, «Միասնության թեւերը»՝ 3 ձայն: Խնձորեսկի վարչական ղեկավար **Արամ Արզանյանը** «Հրապարակի» հետ զրույցում պնդեց, որ իր կամքով է լքել զբաղեցրած պաշտոնը, պատճառը գյուղատնտեսական աշխատանքներով ծանրաբեռնվածությունն է: «Դեռ մեկ ամիս առաջ էի որոշել ազատման դիմում գրել, գյուղատնտեսությամբ պիտի զբաղվեմ, չեմ հասցնում»,- ասաց նա: Իսկ ինչո՞ւ հենց այս օրերին՝ ընտրությունների արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, երբ ազատման դիմումներ են գրել նաեւ Առուշանյանի օգնականը, խորհրդականն ու տեղակալը: «Ուզել էի մեկ ամիս առաջ գրեմ, էն էլ հիմա գրեցի, ես հողեր ունեմ, չեմ հասցնում համատեղել»: Նա չգիտեր, թե ով է իրեն փոխարինելու: Պարզ է, որ Առուշ Առուշանյանն ում ուզի, կնշանակի, նա այլեւս ՔՊ-ից ազատ գործելու քարտ-բլանշ է ստացել: Կրկին հարցրինք՝ իսկ գուցե չե՞ք կարողացել Առուշանյանի հրահանգով ՔՊ-ի համար ձայներ ապահովել, դրա համար եք ազատվել, ասաց. «Չէ, ես ուղղակի ուզում էի հեռանալ իմ անձնական խնդիրների պատճառով, ես արդեն ազատման դիմում եմ գրել ու հեռացել»:

ԴՐԱՆՔ ՈՉ ԹԵ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԵՆ, ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հրապարակի» զրուցակիցը ռազմական փորձագետ **Կարեն Վրթանեսյանն** է:

- Իշխանությունները բանակը, զինված ուժերը դարձրել են իրենց քաղաքական նպատակների համար կիրառվող մահակ: Այս ընտրություններից առաջ Փաշինյանը բանակը, ՊՆ-ն ներքաշեց քաղաքական պրոցեսների մեջ: Նախ՝ արտերկրից, հատկապես ՌԴ-ից ժամանած ՀՀ քաղաքացիներին, ովքեր Հայաստան էին գալիս ընտրության մասնակցելու, սկսեցին սպառնալ վարժական հավաքների տանելով, երեկ էլ տեղեկացանք, որ հերթը լրագրողներին է հասել, վարժական հավաքներին մասնակցելու ծանուցում է ստացել նաեւ այն լրագրողը, որը նկարահանել էր Վարդենիսում ժամը 20:00-ից հետո զինվորների քվեարկությունը: Այս ամենի ֆոնին քարոզարշավի ակտիվ մասնակիցներից մեկը պաշտպանության նախարարն էր, այն դեպքում, երբ օրենքը զինվորականներին արգելում է քաղաքականությամբ զբաղվել: Ի՞նչ նախադեպ է սա:

- Նախ պետք է կենտրոնանալ իրավական կոմպոնենտի վրա եւ ասել, որ երբ, այսպես կոչված, վարժական հավաքների մասին օրենքում փոփոխություններ արվեցին, դեռ այդ ժամանակ իրավաբաններն ու իրավապաշտպաններն ահազանգում էին եւ զգուշացնում, որ բազում խնդիրներ կան, իսկ ամենացցուն խնդիրն այն է, որ օրենքի այդ փոփոխությունները կարող են կիրառվել կամայականության սկզբունքով, հատկապես իշխանության քաղաքական հակառակորդներին պատժելու համար: 2024 թվականին Քաղաքական իրավունքների հայկական կենտրոնը շատ լավ վերլուծել էր այդ խնդիրը: Այն, ինչ այսօր կատարվում է, դեռ այն ժամանակ կանխատեսվել է: Ավելին՝ նման դեպքեր դեռ 2022 թվականին են եղել, երբ Դիմադրության շարժման ժամանակ որոշ ընդդիմադիր ակտիվիստների ուղարկեցին այդ հավաքներին: Ի դեպ, «վարժական հավաք» ասվածը սխալ է, խոսքն իրականում մարտական հերթապահության մասին է: Վարժական կոմպոնենտը շատ փոքր է, այն լինում է մի քանի օր: Բանակում նույն այս իշխանության վարած քաղաքականության հետեւանքով կենդանի ուժերը չեն հերիքում, եւ հենց այդ պատճառով կենդանի ուժի պակասը լրացնում են քաղաքացիներին իրենց բնականոն կյանքից, աշխատանքից կտրելով: Դա ոչ թե վարժական հավաք է, այլ՝ պարտադիր զինծառայություն: Իսկ որ ամենավատն է՝ ընտրությունը կատարվում է կամայականության սկզբունքով: Մեկին կանչում են երեք անգամ, մյուսին՝ ոչ մի անգամ: Օրենքով դա կարգավորված չէ: Պարզ է, որ առանց այն էլ բռնապետական մեծ հակումներ ունեցող ռեժիմը բանակը պետք է դարձներ բռնաճնշումների գործիք: Այլ տարբեր մեթոդներ էլ են հորինել, որոնք մենք տեսանք այս ընտրություններից առաջ, օրինակ, բարեգործության արգելքը, որը վերաբերում է բացառապես ընդդիմադիր ուժերին, ոչ մի մերձիշխանական կամ իշխանական գործիչ իր բարեգործություններն այդպես էլ չդադարեցրեց:

- Խնդիրն այն է, որ ոչ միայն քաղաքական հակառակորդներին են իրենց վարժական հավաքներով սպառնում, այլեւ շարքային քաղաքացիներին, որոնց մեջ գուցե նաեւ իրենց ընտրող քաղաքացիներ էլ կան: Մարդիկ իրենց պարտքն են կատարում, արտերկրից գալիս են ընտրությանը մասնակցելու, այդտեղ չկա որեւէ հանցանք, սակայն բանակի միջոցով դա փորձում էին կանխել:

- Իրական ժողովրդավարական երկրներում ոչ թե արգելում են ընտրությանը մասնակցել՝ սպառնալիքների միջոցով, այլ՝ խրախուսում են: Ինչո՞ւ, որովհետեւ ինչքան շատ են քաղաքացիները ներգրավվում քաղաքական պրոցեսներին, մասնավորապես՝ ընտրություններին, այնքան ավելի ժողովրդավար է դառնում այդ երկիրը, եւ ավելի շատ է հաշվի առնվում հասարակության կարծիքը, սակայն մենք տեսնում ենք լրիվ հակառակ պրոցեսը, որը բնորոշ է ավտորիտար կամ բռնապետական երկրներին: Բռնապետություններում են փորձում հասարակությանը հնարավորինս հեռու պահել քաղաքական պրոցեսներից, որպեսզի կարողանան կոնկրետ նպատակների հասնել:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԿՈԹԻ ԳՅՈՒՂԻ ԻՇԽԱՆԱՄԵՏ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղը (Վանո Սիրադեղյանի հայրենի գյուղը) երկար՝ 38 կմ սահման ունի Ադրբեջանի հետ: Գյուղի ամենաբերրի հողերից շուրջ 1000 հեկտարը գտնվում է Ադրբեջանի զինուժի վերահսկողության ներքո կամ՝ թիրախում եւ վտանգավորության պատճառով չի մշակվում: 1990-ական թվականներին Կոթին շուրջ 40 զոհ է տվել: Կոթիի բնակիչները հայրենասիրություն գիտեն ոչ թե դասագրքերից, այլ՝ սեփական կյանքից, գյուղի հին ու նոր տարեգրությունից:

Ինչպե՞ս ստացվեց, որ սահմանամերձ, հերոսական տարեգրություն ունեցող Կոթին հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրություններում քվեների մեծ մասը տվեց 44-օրյա պատերազմում պարտությամբ հպարտացող, Արցախ հանձնած, Կիրանցը մեջտեղից կիսած Նիկոլ Փաշինյանի գլխավորած ՔՊ կուսակցությանը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը Ֆեյսբուքի իր էջում հպարտությամբ հրապարակել է Կոթիում տեղի ունեցած քվեարկության արդյունքները, ըստ որի՝ 867 ընտրողից 562-ը կամ ընտրողների 64,82 տոկոսը քվեարկել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին: «Ուժեղ Հայաստան» դաշինքը ստացել է 167 քվե, «Հայաստան» դաշինքը՝ 41, ԲՀԿ-ն՝ 23: Կոթեցիների՝ այսպես քվեարկելու պատճառները որո՞նք են: Պատճառը, պարզվում է, շատ պարզ է. նրանք մի դիմում են ներկայացրել Փաշինյանին եւ հույս ունեն, որ իրենց դիմումը կհարգվի: Քվեները տվել են այդ պայմանով: Բանն այն է, որ Կոթի գյուղից Արարատ Մուրադխանյանը 2003-ից գտնվում է անազատության մեջ: Նա ցմահ ազատազրկման է դատապարտվել 2002-ին՝ Կոթիի հարեւան Բարեկամավան գյուղից սերված Լեւոն Մեհրաբյանի ու նրա 3 հարազատների սպանության համար: Դատարանում Ա. Մուրադխանյանն իրեն մեղավոր չի ճանաչել: Նա դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան, շահել է դատը՝ ընդդեմ Հայաստանի: Ըստ Եվրադատարանի, Մուրադխանյանի կալանքը 2004-2007 թվականներին եղել է անօրինական, եւ դրա համար Հայաստանը, որպես բարոյական փոխհատուցում, նրան վճարել է 6 հազար եվրո, բայց այս որոշումը նրան ազատություն չի բերել:

Կոթիի եւ հարակից գյուղերի բնակիչները, որոնք Մուրադխանյանին ճանաչում են, ընդհանուր՝ 2 հազար 500 մարդ, այս տարի Նիկոլ Փաշինյանին նամակ են գրել եւ հայտնել, որ Ա. Մուրադխանյանի հանդեպ արդար դատաքննություն չի իրականացվել, գործի համար կարեւոր փաստեր կոծկվել են, հետո քրեական գործով ի հայտ են եկել նոր հանգամանքներ, եւ Փաշինյանից խնդրել են արդար դատաքննություն: Այդ դիմում-խնդրանքը մայիսի 30-ին Ոսկեվան գյուղի ներքեւի հատվածում հանձնվել է Նիկոլ Փաշինյանին: Ըստ կոթեցիների՝ Փաշինյանը խնդրանքին անորոշ է պատասխանել՝ ասելով, թե դիմումը կքննվի: Սա առաջին դեպքը չէ, որ կոթեցիները Մուրադխանյանի խնդրով դիմում են երկրի ղեկավարներին: 2013թ. փետրվարի 18-ին կայացած նախագահական ընտրություններում էլ Սերժ Սարգսյանն էր Կոթիում թեկնածուներից ամենաշատ՝ 902 քվե ստացել: Նորից այն պատճառով, որ կոթեցիները Ս. Սարգսյանին էին դիմել՝ Արարատ Մուրադխանյանին ազատելու խնդրանքով եւ հույս ունեին իրենց իշխանամետ քվեարկությամբ օգնել նրա ազատվելուն: Մայիսի 30-ին կոթեցիները Նիկոլ Փաշինյանին եւս երկու խնդրով են դիմել՝ Կոթիի առանձնատների 65 տոկոսն է միայն գազիֆիկացված, գազիֆիկացման ցանցն ընդլայնելու, իրենց տներ բնական գազ անցկացնելու համար գյուղացիները գումար չունեն եւ պետական աջակցություն են խնդրել: Կոթիում պետական աջակցությամբ, վարկային միջոցներով 70 առանձնատուն է կառուցվել, եւս 20-ի շինարարությունը հաստատված է: Կոթեցիները Փաշինյանին խնդրել են, որ սահմանամերձ Կոթիում, ինչպես Բաղանիսում, Ոսկեպարում, Բերքաբերում, Կիրանցում, այդ ծրագրով կառուցվող տների արժեքն ավելացնեն՝ ոչ թե 21 միլիոն դրամ տան, այլ՝ 16 միլիոն:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՄԵՋ ԷԼ ԼԱՎ ՄԱՐԴԻԿ ԿԱՆ, ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ԷԼ ՍԵՎԱԶԳԵՍՏ ՄԱՅՐԵՐ ԼԻՆԵՆ

Հունիսի 2-ին հրապարակված տեսանյութը, որում Մասիսում քարոզարշավի ժամանակ ՔՊ-ականները հարձակվել էին «Ուժեղ Հայաստան» դաշինքի անդամների վրա, հիմնականում՝ կանանց, ծեծել, քաշքշել, վրդովմունքի մեծ ալիք առաջացրեց:

«ՈՒ ժեղ Հայաստանից» Հրայր Գեւորգյանը պատմել էր, որ վեճը սադրել են ՔՊ-ականները, հարվածողների թվում ամենաակտիվը Երկրապահ կամավորական միության Մասիսի մասնաճյուղի ղեկավար **Արսեն Հարությունյանն** էր: «Հրապարակը» զրուցել է նրա հետ:

- Տեսանք, որ մի խումբ ՔՊ-ականներ, այդ թվում՝ Դուք, քաշքշում ու ծեծում էիք ընդդիմադիրներին, այդ թվում՝ ընդդիմադիր կանանց, որոնց շարքերում կար նաեւ հղի կին: Ինչո՞ւ էիք նման կերպ պահում Ձեզ: ԵԿՄ անդամին, այն էլ՝ ղեկավարին, հարմի՞ր է կին ծեծելը:

- Խեղաթյուրում են իրականությունը, ինչը չի կարելի: Ես երդվում եմ, որ ոչ մեկին ծեծի չեմ ենթարկել, այն էլ՝ կնոջ:

- Տեսանյութ կա, որտեղ երեւում է, թե ինչպես եք հարձակվում մի կնոջ վրա:

- Նախ՝ դա իրականում կռիվ էլ չէր, այլ քաշքշոց էր: Կանայք էին ղժժում, ճվում, սադրում էին, ինչ էին անում՝ ով ա իմանում:

- Օրինակ՝ այդ կինն ի՞նչ էր արել, որ հարձակվել էիք վրան:

- Ես հունից դուրս չեմ եկել, ոչ էլ հարձակվել եմ: Նկարել են այն հատվածը, որը պետք է իրենց, բայց, այ, եթե դեմից նկարեին, պատկերը այլ կլիներ: Ես երդվում եմ, որ կանանց ձեռք չեմ տվել, բայց ինչ ասես, ասում են՝ տո հրել եմ: Տո հիմա ասել էի, ես ընդամենը մի տղայի եմ հանգստացրել, պիտի անեի դա, թե չէ... գոռում էին, ճվում էին, չէի էլ հասկանում, թե ինչ են ասում, հետո լսեցի, որ գոռում են՝ «Սամվել վարչապետ»: Է հա՝ վարչապետ, վարչապետ, թող լինի վարչապետ, ինչ ա եղել: Ես անգամ թուրքի կանանց հետ եմ ինձ մակարդակով պահել, վերջում թուրքերը շնորհակալություն են հայտնել, որ բաց եմ թողել, գնացել են, ո՞նց կարամ ես հայ կնոջը քաշքշեմ: Էդ կինն էնքան դրոշակով խփեց էդ տղամարդու գլխին, որ նա էլ շուռ եկավ, մի հատ հրեց, առանց իմանալու՝ կին է, թե՝ տղամարդ:

- Ո՞վ էր այդ տղամարդը, ճանաչո՞ւմ եք:

- Այո, եթե անգամ ճանաչում եմ, ի՞նչ կա էդտեղ, էդ մարդը մեղավոր չի՝ սադրել են:

- Այսինքն, եթե սադրում են, նորմա՞լ է կնոջ վրա ձեռք բարձրացնելը եւ առհասարակ՝ բռնություն կիրառելը՝ լինի կին, թե տղամարդ:

- Նա չի իմացել, որ կին է:

- Այսինքն, ի՞նչ է նշանակում՝ չի իմացել, չի՞ տարբերում կնոջը տղամարդուց:

- Չի տեսել, նա շրջված է եղել:

- Գուցե ուղղակի ժամանակները փոխվե՞լ են, էլ կին, հղի կին հարգել չկա...

- Բայց այդ հղի կնոջը ոչ ոք չէր խփել, նա բղավում էր. «Հոպար, ինձ մի խփի», իրեն ոչ ոք չէր խփում: Էդ ինչի՞ չեն նկարել, թե ոնց եկան, մեր վրա հասան, սադրեցին:

- Իսկ ինչո՞ւ եք այս իշխանություններին այդքան ջանասիրությամբ սատարում, ի՞նչ են արել նրանք մեր երկրի համար, Երկրապահը հիմա երկիր հանձնողին է սատարում:

- Ես ճշտին եմ սատարում: Ես Կառավարության, Պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող մարդ եմ, ինչ եք կարծում՝ ինչի՞ համար պիտի նրանց դեմ գնամ:

- Օրինակ՝ նրա համար, որ Արցախը հանձնեցին, նրա համար, որ ադրբեջանական զորքը Ջերմուկում դիրքեր է կառուցում, որ Կիրանցից տարածքներ հանձնվեցին, հիմա էլ խոսում են Տիգրանաշենը հանձնելու մասին:

- Պուտինին գնացեք հարցրեք՝ խի են հողեր հանձնել:

- Պուտի՞նն է ադրբեջանական զորքը Ջերմուկ ու Գեղարքունիք բերել:

- Ջերմուկում կլինի դեմարկացիա, դելիմիտացիա, նրանք կգնան այնտեղից, ոչ մի սանտիմետր տարածք չի մնա Ադրբեջանին:

- Իսկ լսե՞լ եք, որ ասում են՝ էլի տարածքներ կան, որ պիտի հանձնենք, եւ դրանց մեջ նաեւ Տիգրանաշենն է: Դա նորմա՞լ եք համարում:

- Ուրեմն լսեք, հարգելի լրագրող, հավերժ թշնամիներ չկան, հիմա ի՞նչ գիտեք, որ կգա 10, 20, 30 տարի, ու երկու ժողովուրդները չեն ապրելու իրար հետ: Ո՞վ կարող է ասել:

- Բայց զիջումները պետք է փոխադարձ լինեն, եթե մենք հանձնում ենք տարածքներ, նրանք էլ պետք է մեր տարածքները հետ տան:

- Մենք Արծվաշեն ունենք անկլավ, փոխանակումներ կլինեն, չի լինի էնպես, որ փոխանակում չլինի, միակողմանի լինի:

- Արծվաշենի եւ Տիգրանաշենի տարբերությունը շատ մեծ է, Տիգրանաշենը հանձնելով՝ հայկական կողմը մեծ կորուստներ է ունենալու, հետո՝ Կիրանցից տարածքներ հանձնեցինք, ի՞նչ ստացանք դրա փոխարեն:

- Բայց Ոսկեպարի եկեղեցին մնաց Հայաստանին:

- Ոսկեպարի եկեղեցին Հայաստանի տարածքում է, հայկական եկեղեցի է, ի՞նչ է նշանակում՝ մնաց Հայաստանին, շնորհակա՞լ լինենք, որ հայկական եկեղեցին չեն հանձնել:

- Բա ինչի՞ էին ասում՝ դա էլ է հանձնվելու: Ադրբեջանցիներն այն ժամանակ կաշառելով, թե ինչպես հողեր են վերցրել, հիմա GPS-ով-բանով ապացուցում են, որ դրանք իրենց հողերն են:

- Այսինքն՝ Ադրբեջանը կարողանում է ամեն գնով մեզնից հող ստանալ, ՀՀ իշխանությունը չի կարողանում ոչինչ անել: Դուք պատերազմի մասնակի՞ց եք եղել:

- Այո, ես պատերազմի մասնակից եմ:

- Եվ նորմա՞լ եք համարում հողեր հանձնելը:

- Բայց ի՞նչ գիտեք, որ նրանք հողեր հետ չեն տալու, նոր է սկսվել պրոցեսը, նրանք էլ հետ կտան:

- 2 տարի է անցել Կիրանցի սահմանազատումից, դա նո՞ր է Ձեզ համար:

- Ժամանակ է պետք, ի՞նչ տեղաշարժ է եղել 35 տարի շարունակ:

- Արցախն ազատագրված էր եւ հայկական տիրապետության տակ էր, տարբերությունը չե՞ք հասկանում:

- Հա, հայեր ապրել են, բայց կա՞մ մի պետություն, որ ճանաչել է Ղարաբաղը Հայաստանի կազմում:

- Եթե չէին ճանաչել, պետք է հանձնվե՞ր, հանձնվելուց հետո էլ ուրանայի՞ք:

- Ես երբեք չեմ մոռացել ու չեմ ուրացել Ղարաբաղը, ինձ երբեք նման բան չասեք:

- Այս իշխանությունը արգելում է խոսել Արցախի, արցախցիների վերադարձի մասին:

- Եթե ՄԱԿ-ի գրասենյակները, Հաագայի դատարանը, ՌԴ-ն նաեւ որպես մեր մեծ եղբայր այդպես վերաբերվեց մեզ, ի՞նչ կարող ենք անել: Ես այդ օրվանից փոխել եմ իմ վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ: Միշտ գնահատել եմ ռուսներին էլ, իրենց ղեկավարին էլ, բայց 10 ամիս մարդիկ մնացին սոված, ոչ մի բան չարեցին, վերջում էլ դավաճանաբար հանեցին, մարդկանց վռնդեցին իրենց տներից, հիմա ի՞նչ են ուզում, ուզում են, որ իրենց սիրենք էնպես, ինչպես առա՞ջ, չի կարող նման բան լինել:

- ՌԴ-ն թողնենք, իսկ Հայաստանի իշխանություններն ինչո՞վ օգնեցին այդ շրջանում արցախցիներին:

- Եթե օգնեինք, մեծ կռվի մեջ կընկնեինք, ու հնարավոր է, որ կորցնեինք նաեւ Սյունիքը: Նրանք, ատամները սրած, դրան էին սպասում:

- Դուք պատերազմ տեսած մարդ եք, արժե՞, որ այդքան վախենում եք կռվից: Ես, իհարկե, պատերազմի կողմնակից չեմ, բայց վախենալ ու հայրենիքը հանձնել կարելի՞ է:

- Ես կռվից հիմա էլ չեմ վախենում, բայց եթե այդ ժամանակ կռվի մեջ մտնեինք, անկանխատեսելի բաներ էին լինելու: Հայ զինվորը չի՞ կռվել է այդպես:

- Կռվել է, իսկ իշխանությունը ոչինչ չի արել:

- Մեծ պետությունները հավաքվել էին Թուրքիայում եւ ուզում էին, որ Ղարաբաղն Ադրբեջանի կազմում լիներ: Պարոն Սերժ Սարգսյանն անգամ հայտարարել էր, որ պատային իրավիճակում ենք արդեն, նա էլ գիտեր, որ պատերազմն անխուսափելի է:

- Այդ դեպքում ինչո՞ւ Փաշինյանը եկավ իշխանության, թող թողներ՝ Սերժ Սարգսյանն իր ձեռքով հանձներ Արցախը:

- Այդ հարցը պիտի տաք Փաշինյանին, ես խաղաղության կողմնակից եմ, ով էլ գա վարչապետ, ես նրա կողքին եմ լինելու, ես անկախության կողմնակից եմ:

- Ալիեւը մեզ պարտադրում է Սահմանադրություն փոխել, ինչո՞վ է անկախ Հայաստանը:

- Շատ բան է ասում, նա իր լսարանի առաջ է գլուխ գովում:

- Դուք ինչի՞ համար եք պատերազմին մասնակցել:

- Մեր անկախության համար:

- Մասիսում ամենաշատ ադրբեջանցիներն են ապրել, հիմա եթե նրանք ցանկանան նորից գալ, բնակվել Մասիսում, կողմ կլինե՞ք, կցանկանա՞ք, որ Ձեր թոռները ադրբեջանցիների հետ դպրոց հաճախեն, Ձեր ընտանիքի կողքին ապրեն:

- Ես չգիտեմ, թե 20-30 տարի հետո ինչ կլինի: Ես արտաքին գործերի նախարար չեմ, կարող է մի 40-50 տարի հետո էդպես էլ լինի, ես ինչ ասեմ: Հիմա չի կարող նման բան լինել, ժամանակ է պետք դրա համար: Ես ինձ հաստատ ապահով կզգամ, ամեն դեպքում, ադրբեջանցին չի գալու էստեղ՝ զենք ու թուր վերցնի:

- Ի՞նչ գիտեք:

- Նրանց մեջ էլ լավ մարդիկ կան: Հո պատերազմի ժամանակ հալվա չէի՞ն բաժանելու: Հարցրեք, թե մենք ինչեր ենք արել, ես չեմ ուզում, որ էլ սեւազգեստ մայրեր լինեն:

- Ուղղակի խնդիրն այն է, որ 3 պատերազմ է բերել Փաշինյանը, եւ նա ու խաղաղությունն անհամատեղելի են:

- Էն ժամանակ էլ տարեկան մի քանի հարյուր զոհ էինք ունենում:

- Հիմա էլ բանակում զինվորներ են մահանում, այրվում...

- Փողոցում էլ են մարդիկ մահանում:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔՊ ԸՆՏՐՈՂԻ ԱՆԱՍՆԱԳՈՄԸ ՇՈՒՏՈՎ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԿՀԱՆՁՆԵՆ

Սահմանամերձ Ոսկեպար գյուղի 37/25 տեղամասում հունիսի 7-ի ընտրությունների արդյունքում ՔՊ կուսակցությունը ստացել է 220, «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ 89, «Հայաստան» դաշինքը՝ 53 քվե, մյուս կուսակցությունները՝ ավելի քիչ թվով քվե: Ոսկեպարում քվեարկել է մոտ 70 սահմանապահ զինծառայող, որոնք, ամենայն հավանականությամբ, իրենց քվեն տվել են ՔՊ կուսակցությանը: Ոսկեպարի շատ բնակիչներ հավատում են Նիկոլ Փաշինյանի հռչակած խաղաղությանը, նաեւ հավատում են, որ իրենց գյուղին կից, ԽՍՀՄ ժամանակ ադրբեջանաբնակ Վերին Ոսկեպար գյուղի տարածքն առաջիկայում՝ սահմանազատման արդյունքում, Ադրբեջանին չի հանձնվելու: Ոսկեպարի բնակիչներից մեկը Վերին Ոսկեպար գյուղի տարածքում անասնագոմ է սարքել, այնտեղ մոտ 100 խոշոր եղջերավոր անասուն է պահում: Նիկոլ Փաշինյանի ու ՔՊ-ի համակիր այդ տղամարդը վստահ է, որ Վերին Ոսկեպարի տարածքը սահմանազատումով Ադրբեջանին չի հանձնվելու, որովհետեւ Ադրբեջանն այդ տարածքի քարտեզը չունի: Ադրբեջանի կողմից այդ անկլավի քարտեզը չունենալու միտքը տարածված է ՔՊ-ականների եւ նրանց համակիրների շրջանում: Ինչպե՞ս կարող են ադրբեջանցիները Վերին Ոսկեպարի քարտեզը չունենալ, եթե ԽՍՀՄ ժամանակ այդտեղ վարչականորեն Ղազախի շրջանին պատկանող գյուղ է եղել, դպրոց, ամռան ամիսներին համամիութենական պիոներական ճամբար է գործել, որտեղ մանուկ հասակում հանգստացել է նաեւ Նիկոլ Փաշինյանը: Նրա՝ որպես լրագրողի առաջին հոդվածներից մեկն այդ ճամբարի մասին է եղել, որտեղ Փաշինյանն ադրբեջանցիների մասին դրական է արտահայտվել: Այնպես որ, անգամ եթե ադրբեջանցիները չպահանջեն, ինքն անպայման հանձնելու է այդ տարածքը, հույս չունենաք: Ի դեպ, Տավուշում արդեն չեն էլ հիշում, որ Կիրանցի սահմանազատման ժամանակ ասվում էր, թե Հայաստանն էլ մեծ տարածքներ պետք է ստանա, որոնք այդպես էլ չհանձնվեցին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«ՈԼ

Ժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ, ընտրացուցակի առաջին համար Նարեկ Կարապետյանը հանդես է եկել հայտարարությամբ, որից կարելի է ենթադրել, որ կուսակցությունը ճանաչելու է հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները, վերցնելու է պատգամավորական մանդատները եւ մասնակցելու է խորհրդարանի աշխատանքին: Կարապետյանն իր հայտարարության մեջ ասել է. «Իշխանության փոփոխության համար երկու տարբերակ կա. մեկը ընտրությունն է, մեկը՝ փողոցային պայքարը՝ փողոցային սահմանադրական ճանապարհով պայքարը: Փողոցային պայքարի արդյունքում պետք է Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնությունը քվեարկի փոփոխության օգտին: Այսօր ընդամենը 8 պատգամավոր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից եթե փոխի իր դիրքորոշումը, Փաշինյանը կորցնում է աթոռը: Իհարկե, ընտրություններից հետո դա բարդ է, բայց հինգ տարվա ընթացքում մենք մեծ հնարավորություն կարող ենք տեսնել այդտեղ»:

Երբ Կարապետյանն ասում է, որ իշխանության փոփոխության երկու տարբերակ կա. մեկը՝ ընտրությունը եւ մյուսը՝ փողոցային պայքարը, եւ միանգամից անցում է կատարում փողոցային պայքարի միջոցով իշխանությունը փոխելու հնարավորության քննարկմանը, նշանակում է, որ նա ընդունում է, որ ընտրության միջոցով իշխանություն փոխել չհաջողվեց, նշանակում է՝ իրենք ընտրության արդյունքները համարում են օրինական եւ ճանաչում են: Երբ Կարապետյանն ասում է, որ ընդդիմությանն ընդամենը 8 ձայն է պետք՝ Փաշինյանին պաշտոնանկ անելու համար, եւ ասում է, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում նման հնարավորություն կարող է բացվել, նա նկատի ունի, որ փողոցային պայքարի արդյունքում հնարավոր է 8 պատգամավորի վրա հանրային ճնշում գործադրել, որ նրանք միանան Փաշինյանի պաշտոնանկության գործընթացին, խորհրդարանում ձեւավորվի նոր մեծամասնություն: Որքանո՞վ է դա իրատեսական. այս պահին դժվար է կանխատեսել, նախորդ խորհրդարանի փորձը ցույց տվեց, որ, հակառակը՝ իշխանությունն ընդդիմությունից երկու պատգամավոր տարավ:

Երբ Նարեկ Կարապետյանն ասում է, որ իշխանության փոփոխության երկու տարբերակ կա, մեկը՝ ընտրությունը, իսկ մյուսը՝ իշխող մեծամասնությունից ձայներ տանելը եւ նոր մեծամասնություն ձեւավորելը, նա այնքան էլ ճիշտ չէ, որովհետեւ այս երկու տարբերակները ոչ թե առանձին տարբերակներ են, այլ ընդամենը մի տարբերակի ենթատեսակներ՝ իշխանության փոփոխություն խորհրդարանի միջոցով: Մի դեպքում ընդդիմությունը մեծամասնություն է ստանում ընտրության արդյունքում, մյուս դեպքում խորհրդարանում ձեւավորված ուժերի հարաբերակցությունն ինչ-որ հանգամանքների ազդեցության տակ փոխվում է: Փողոցային պայքարով իշխանություն վերցնելը բոլորովին այլ բան է: Փողոցային պայքարի իմաստը ոչ թե իշխանական մի քանի պատգամավորի ընդդիմության կողմը բերելն է, ի դեպ, դա կարող է տեղի ունենալ նաեւ առանց փողոցային պայքարի, ենթադրենք՝ 8 պատգամավորի համոզելով կամ կաշառելով: Փողոցային պայքարով իշխանափոխությունը իշխանությանը հանրային դիմադրության միջոցով հրաժարական պարտադրելն է՝ փողոցային պայքարի միջոցով երկրում ստեղծել մի իրավիճակ, որը դուրս է իշխանության վերահսկողությունից, երբ կառավարիչները փաստացի կորցնում են վերահսկողությունը կառավարման լծակների նկատմամբ, պարտադրված են լինում հրաժարական տալ:

Ինչո՞ւ Հայաստանի նոր ընդդիմությունը չգնաց այդ ճանապարհով, ինչո՞ւ փորձ չարվեց չճանաչել կեղծված ընտրությունների արդյունքները եւ փողոցային պայքարի միջոցով վերցնել իշխանությունը, ստիպել, որ Փաշինյանը հրաժարվի իշխանությունից, եւ երկրում անցկացվեն նոր ընտրություններ՝առանց գործող ռեժիմի կողմից վարչական ռեսուրսի չարաշահման, առանց բռնության, անօրինականության եւ ճնշման:

Հնարավոր է, որ ընդդիմության առաջնորդները չեն հավատում այդ ճանապարհով իշխանությունը վերցնելու հնարավորությանը, չեն հավատում, որ հասարակությունն այդքան վճռականություն եւ խիզախություն կունենա՝ պայքարել եւ հաղթել: Հնարավոր է, որ ընդդիմության առաջնորդներն իրենք այդքան համարձակություն եւ խիզախություն չունեն՝ առաջնորդելու փողոցային պայքարը, նրանք իրենց տեսակով հեղափոխականներ չեն, ավելի շուտ՝ կոմֆորմիստներ են կամ ռեֆորմիստներ: Հնարավոր է, որ նրանց վրա կա արտաքին ճնշում, ԱՄՆ-ի, ԵՄ-ի կամ հենց նույն Ռուսաստանի կողմից: Օրինակ, ԵՄ բարձրագույն ներկայացուցիչը հայտարարություն է տարածել եւ քաղաքական բոլոր դերակատարներին կոչ է արել՝ «հարգել քվեարկության արդյունքները»: Բառացի սա նշանակում է, որ ընդդիմությունը պետք է ընդունի ընտրության պաշտոնական արդյունքները եւ ոչ մի դեպքում չընդվզի դրանց դեմ: Իսկ ինչպե՞ս կարող են հայ ընդդիմադիրները մերժել կամ հակադրվել ԵՄ բարձրագույն ներկայացուցչի հորդորին:

Արձանագրենք եւս մի իրողություն. 2017 թվականի խորհրդարանական ընտրություններից սկսած, բոլոր չորս ընտրություններից հետո որեւէ հետընտրական զարգացում չի եղել, ընդդիմությունը միշտ ընդունել է ընտրության արդյունքները եւ գոհացել իր ստացած կամ իրեն տրված արդյունքով ու մանդատներով:

2017-ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍԿՍԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐԵՎԷ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՉԻ ԵՂԵԼ

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԻ ՀԱՍԵԼ ԵՆՔ ՎԵՐՋԻՆ...

Պարոն Հովակիմյան, հիշո՞ւմ ես, մի անգամ իմ եւ քո սիրելի Աննա Իսրայելյանի մոտ հարցազրույցի էինք, եւ ես քեզ հստակ ասացի՝ Վահագ տղա, եթե դու քո այդ կարծիքով որեւէ գյուղ մտնես, քեզ կծեծեն: Այն ժամանակ (հստակ օրը չեմ հիշում) դու ընդդիմադիր էիր եւ ահավոր քննադատում էիր Սերժ Սարգսյանի գյուղատնտեսական ռեֆորմը: Բայց քանի որ ռեֆորմը չէիր կարդացել, ինքնամոռաց «վրա էիր տվել» գյուղապետերին, թե տասնամյակներով չեն փոխվում, իրենց ազգուտակին լցրել են գյուղապետարաններ, լավ հողերը զավթել, գյուղացուն կողոպտել, ֆլան-ֆստան: Ես քեզ նույնիսկ հարցրի՝ Վահագ, ո՞ւր ես վերջին անգամ եղել գյուղում, տեսե՞լ ես, թե ինչպես են շատ գյուղապետեր կաշվից դուրս գալիս, որ գյուղը պահեն, որ գյուղացուն պահեն գյուղում, ո՞ւր ես խոսել գյուղացիների հետ, որ միշտ իրենց գյուղապետի կողքին են՝ իրենց բանուգործին: Քանի՞ գյուղ տվեցիք, Վահագ, քանի՞ դպրոց փակեցիք, քանի՞ գյուղապետ ձեր պատճառով թողեց-գնաց արտագնա աշխատանքի: Մի խոսքով՝ ասե՞լ եմ, որ քեզ կծեծեն... Ասել եմ:

Վահագ, հիշո՞ւմ ես, երբ քեզ հանձնարարեցին սահմանադրական հանրաքվե կազմակերպել (2019 թ. ապրիլի 5-ին), դու տապալեցիր: Այն ժամանակ էլ ես քեզ ասել էի՝ Վահագ տղա, գործ չունես, չես ձգելու: Ասե՞լ եմ... Ասել եմ: Դեռ 2018 թվին ձեր ողջ թիմի մասին ասել եմ, որ սրանք պատահական անցորդներ են եւ դժբախտություն են բերելու մեր երկրին ու ժողովրդին: Ասե՞լ եմ... Ասել եմ: Բա հիմա ինչ ասեմ քեզ, Վահագն Հովակիմյան, որ այս ընթացքում աճել ու դարձել ես ԿԸՀ նախագահ: Գոնե գիտե՞ս, թե ինչ է ԿԸՀ-ն, ինչի համար է, ով է պահում այդ կառույցը, ով է քեզ աշխատավարձ տալիս... Ի դեպ, ամսականդ ինչքա՞ն է, Վահագ ջան... Բա դու կողմնակի եկամուտ չունե՞ս՝ պարգեւատրություն, հավելավճարներ... Հասկացա: Ուրեմն մեր պետությունը ուսուցչին քիչ է վճարում, բժշկին քիչ է վճարում, գիտնականին «վաբշե» չի վճարում, բանակի բյուջեն կտրում է, տալիս է քեզ, որ ուտես եւ այսքան վմ՛ատ աշխատես, չկարողանա՞ս երկու թիվ գումարել, ալարե՞ս երկու էշի գարի իրարից ջոկել...

Պարոն Հովակիմյան, այնպես չէ, որ ԿԸՀ-ն Նիկոլի ստեղծածն է, ու մինչ օրս ոչ մի ընտրություն այդ կառույցով չի անցել: Այդ կառույցը շատ բան է տեսել, Վահագ, քեզնից առաջ էլ նախագահներ է ունեցել, հանձնաժողովներ: Այդ կառույցը Մուկուչյան է տեսել, Վահագ, որ քեզնից հազար անգամ լավ էր նկարում: Խոշորացույցով մտնում էինք պարկերի ու թվերի մեջ, քրքրում ամեն ինչ, բայց 2-3 ձայնից ավելի չէինք գտնում: Մուկուչյանը վարպետ էր, Վահագ, մեծատառով վարպետ: Հիմա դու քո «տապոռային» մտածողությամբ եկել, ուզում ես Մուկուչյանն աշխատել: Չի ստացվելու, չես ձգում: Վահագ, դու ոնց որ Պանիկովսկին լինես... Սա՝ Օստապ Իբրահիմովիչին, սա՝ ինձ, սա՝ Բալագանովին, սա՝ Կոզլեւիչին... Այ տղա, 21-րդ դարում ո՞վ է այդպես քվեներ հաշվում... Տպավորություն է ստեղծվում, որ սովետի ժամանակների խանութպանի «չոտկով» ես հաշվել՝ հաց, պանիր, կարագ, մարագ, կես կիլո միս, երկու մածուն՝ ութ ու հիսուն... Նայում եմ կենսագրությունդ, գյուղացի էլ չես, որ ասեմ՝ հա... Հարյուրներով քվեներ ես զրոյացրել, ո՞վ է պատասխան տալու:

Կողքերդ մի նայիր, Վահագ տղա, որովհետեւ դու ես պատասխան տալու: Շեֆդ իրեն վաղուց է ազատել այդ ցավից՝ հայտարարելով, որ ընտրակեղծիքների էջը փակված է: Մինչդեռ դու եկել եւ ընտրակեղծիքներ ես արել, հարյուրներով քվեներ ես գողացել, քվեներ ես գրել, թվեր նկարել, որոնք չկան իրականության մեջ: Դու այնքան շատ ես ուզեցել «լավություն» անել շեֆիդ, որ տեղամասերից մեկում ընդհուպ 112,93 տոկոս մասնակցություն ես նկարել (CIVIC-ը վկա): Եվ այսքանից հետո կարծում ես՝ շե՞ֆդ պետք է պատասխան տա... Ծը... Դու ես կանգնելու պատի տակ, Վահագ ջան, քեզ են ծեծելու փողոցում կամ դատելու, որովհետեւ դու փնթի թվանկարիչ ես ու չես արդարացրել շեֆիդ՝ քո հանդեպ ունեցած «բարձր» վստահությունը:

ՀԳ. *Այսօր չորս կողմից նույն հարցն են տալիս՝ ի՞նչ անել ստեղծված իրավիճակում, վերցնել մանդատները, չվերցնել, ընդունել ընտրությունների արդյունքները, չընդունել, գնալ խորհրդարա՞ն, թե՞ կառավարության շենք... Դժվար է, իհարկե, որոշում կայացնելը: Վահագն ու իր շեֆը, ախր, այնպիսի բան չեն արել, որի անունը կարելի լինի դնել ընտրություն ու կռիվ տալ արդարության համար: Բառի բուն իմաստով՝ ք.քել են գործի մեջ, դրել մի կողմ: Եթե այս պահին Վահագն Հովակիմյանը ձերբակալված լիներ, ես դեռ կհասկանայի, թե ինչ է սպասվում այս «ընտրություններին»: Եթե Նիկոլը ձեռքը տաներ դանակին, որ երակները փրթի, ես դեռ կհասկանայի, որ ինչ-որ սկզբունքային հարց կա մեջտեղում, ու ճիշտը ամեն ինչ ջնջել, նորից ընտրություն անելն է՝ առանց Նիկոլի ու Վահագի: Բայց հիմա ինչ ասեմ, երբ Հայաստանի մի կեսը չկա, իսկ մյուս կեսում նույնիսկ իշխանություն չենք կարողանում ձեւավորել:*

Երեւի սա արդեն վերջն է վերջին սերիայի...

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՈՒԿՐԱԻՆԱ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՑ «ԹԱԳԱՎՈՐԻՆ». ԶԵԼԵՆՍԿԻՆ ՀԱՆԴԻՊՈ՞ՒՄ Է ԽՆԴՐՈՒՄ, ԹԵ՞ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Չնայած ամենօրյա կանոնավոր եւ մահացու փոխադարձ հարվածներին, ավելի քան 4 տարի շարունակվող արյունալի պատերազմին, վերջին շրջանում հատկապես Կիեւից ու ամենաբարձր մակարդակով՝ Զելենսկու շուրթերով, հաճախ են հնչում հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ կոչեր, ՌԴ նախագահի հետ դեմառդեմ հանդիպելու մասին ակնարկներ, իսկ օրերս՝ արդեն ուղիղ առաջարկ: Սա մի կողմից

հույս է ներշնչում, որ մարդկային հարյուր հազարավոր կյանքեր խլած եւ խլող «եղբայրասպան» պատերազմը հյուծել եւ ձանձրացրել է երկու կողմին էլ, սակայն ամեն ինչ իրականում այնքան պարզ չէ՝ դատելով Զելենսկու՝ Վլադիմիր Պուտինին ուղղված վերջին բաց նամակին Կրեմլից հնչող կոշտ արձագանքից:

Հունիսի 4-ի երեկոյան հայտնի դարձավ, որ Ուկրաինայի նախագահը բաց նամակ է հղել ՌԴ նախագահին՝ հայտարարելով, որ Ուկրաինան կարող է կտրուկ բարձրացնել պատերազմի գինը Ռուսաստանի համար, եւ կոչ անելով անձամբ հանդիպել՝ ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Իր պաշտոնական կայքում հրապարակած նամակում Զելենսկին նշում է, որ «պատերազմն ավելի ու ավելի բացասական է ազդում Ռուսաստանի վրա»: Նրա խոսքով՝ ՌԴ բնակիչներին դուր չեն գալիս «մեր անօդաչու թռչող սարքերն ու հրթիռները», բենզինի պակասը, մշտական սահմանափակումները եւ նախատեսվող զորահավաքը: Հղում անելով հետախուզական տվյալներին՝ Զելենսկին նաեւ հայտնել է, որ մայիսին Ուկրաինայի առաջնագծում սպանվել կամ ծանր վիրավորվել է 30 հազար ռուսաստանցի, եւ որ այս ցուցանիշը պահպանվում է մի քանի ամիս շարունակ: Զելենսկու խոսքով՝ «Ռուսաստանի կորուստների 63%-ը զոհերն են եւ միայն 37%-ը՝ վիրավորները»:

«21-րդ դարում բանակները չեն կարող իրենց թույլ տալ նման հավասարակշռություն: Զոհվածների համամասնությունն ապագայում կաճի»,- ասել է Ուկրաինայի նախագահը: Նա կոչ է արել Պուտինին՝ դեմառդեմ բանակցություններ վարել չեզոք երկրում եւ կրկին մերժել է Ռուսաստանի առաջարկը՝ հանդիպելու Մոսկվայում: Զելենսկին նշել է, որ Պուտինի կառավարման 26 տարիներն «ամբողջությամբ փոխվել է Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերությունների օրակարգը. «Մեր ժողովուրդներն առեւտրի եւ քաղաքացիական այլ հարցերի քննարկումից անցել են բացառապես հարվածների եւ կորուստների մասին խոսելուն»: Նրա պնդմամբ, ԱՄՆ-ն իր ողջ ուշադրությունը նվիրում է Իրանի հարցին, եւ սխալ կլինի պարզապես սպասել, թե երբ հերթը կհասնի Եվրոպայում պատերազմին: «Ուկրաինան առաջարկում է պատերազմը դադարեցնել մեր եւ ձեր միջեւ ձեւաչափով»,- գրել է նախագահը եւ միաժամանակ մի քանի կետ է նշել՝ Պուտինի հետ բանակցությունների նախապատրաստման եւ ձեւաչափի վերաբերյալ: Օրինակ, առաջարկել է նշանակել հստակ ամսաթիվ եւ հանդիպումն անցկացնել երրորդ երկրում, ոչ թե Մոսկվայում կամ Կիեւում: Առաջարկել է Շվեյցարիան, Թուրքիան, արաբական երկրները: Միաժամանակ առաջարկել է Եվրոպայի եւ Միացյալ Նահանգների մասնակցությունը բանակցություններին՝ նշելով, որ պատերազմը տեղի է ունենում Եվրոպայում, եւ տրամաբանական է նրանց մասնակցությունը, ովքեր կարող են հանդես գալ որպես երաշխավորներ:

Զելենսկին նաեւ առաջարկել է կրակը դադարեցնել առաջնագծում. «Ներկայիս առաջնագիծն այն գիծն է, որտեղից պետք է սկսվի դիվանագիտությունը: Ուկրաինան պատրաստ է լիովին դադարեցնել կրակը բանակցությունների ողջ ընթացքում»: Բացի այդ, Ուկրաինայի նախագահն առաջարկել է նաեւ ԱՄՆ-ի կողմից հրադադարի մոնիտորինգ եւ գերիների փոխանակում՝ «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքով: «Եթե դուք անձամբ ձեր մտքում չհանգեք այն եզրակացությանը, որ ժամանակն է ավարտել այս պատերազմը, Ուկրաինան կշարունակի պայքարել իր գոյության համար: Մեզ հետ կլինեն նրանք, ովքեր կաջակցեն մեզ: Բայց դուք նույնպես ստիպված կլինեք շատ ավելի մեծ ջանքեր գործադրել՝ պայքարելու ձեր սեփական գոյության համար. ոչ թե Ռուսաստանի, այլ՝ ձեր սեփական: Եվ սա սպառնալիք չէ ինձնից կամ Ուկրաինայից: Սրանք Ռուսաստանի պատմության փաստեր են, որոնք դուք լավ գիտեք. երբ Ռուսաստանը հոգնում է, տեղի են ունենում փոփոխություններ: Մենք կարող ենք աշխատել նման ուժասպառության հասնելու համար: Դուք կարող եք դադարեցնել ձեր պատերազմը»,- նամակը եզրափակել է Զելենսկին:

Պուտինի պատասխանը չի ուշացել. ՌԴ նախագահը հայտարարել է, որ ներկայում որեւէ պատճառ չի տեսնում հանդիպելու Ուկրաինայի նախագահի հետ: «Այս նամակը պարունակում է բավականին կոպիտ դիտողություններ: Դա անձնական հանդիպման համար պայմաններ ստեղծելու, թե՞ անձնական հանդիպում չնշանակելու միջոց էր: Կարծում եմ՝ վերջինն էր»,- ասել է Պուտինը: ՌԴ նախագահը նաեւ մեկնաբանել է հաղորդագրության մեջ իր տարիքին վերաբերող հղումները. «Գլխավորը տարիքը չէ, այլ կոմպետենտությունը, աշխատելու ունակությունը»: Այն, որ Կիեւը հնարավոր է համարել հանրային քննարկում ծավալելը, Պուտինը բացարձակ սխալ ու անդաստիարակություն է անվանել: Անհասկանալի է, թե ինչու է Զելենսկին Թրամփի վարչակազմին զրկում Ուկրաինայի վերաբերյալ համաձայնագրերի երաշխավոր լինելու իրավունքից: Ուկրաինայի հետ բանակցությունները պետք է վարեն համապատասխան գերատեսչությունների հատուկ պատրաստված անձինք՝ ասել է նա:

Զելենսկու «աղմկահարույց» նամակին անդրադարձել է նաեւ ԱՄՆ նախագահը: Լրագրողները նրան հարցրել են՝ արդյո՞ք Զելենսկին եւ Պուտինը պետք է հանդիպեն, նախքան ԱՄՆ-ն վերսկսի բանակցությունների միջնորդի դերը, որն այս փուլում, Իրանի հետ կապված գործողությունների պատճառով, դադարեցրել են: «Ես դեմ չեմ դրան: Այսինքն՝ թող իրենք կարգավորեն: Ես նրանց հասցրել եմ այս իրավիճակին եւ կարծում եմ՝ ամեն ինչ կլուծվի»,- պատասխանել է Թրամփը: Նա վստահ է, որ հիմա «մոտենում է այն պահը, երբ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ խնդիրը պետք է կարգավորվի», ու եւս մեկ անգամ հիշեցրել է, որ «սա պատերազմ է, որը երբեք չպետք է տեղի ունենար եւ երբեք չէր լինի, եթե ես նախագահ լինեի»: Չնայած հակասական արձագանքներին, փաստ է, որ Զելենսկու բաց նամակը վկայում է հակամարտության նոր փուլի, նոր իրողությունների մասին, իսկ թե որոնք են դրա իրական նպատակն ու կանխատեսելի հետեւանքը, առայժմ հայտնի չէ, այնպես, ինչպես պարզ չէ, թե այս ամբողջ աղմուկի մեջ ում ձայնն է ավելի ազդեցիկ ու որոշիչ, եւ ով է իրականում խաղաղության ձգտում:

Արա ԱԼՈՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՂԾՎԱԾ ԵՆ, ԳՈՂԱՑՎԱԾ ԵՆ, ՉԻ ԿԱՐԵԼԻ ԸՆԿՃՎԵԼ

«Պետք չէ քննարկել մանդատ վերցնել-չվերցնելու հարցը: Ընդդիմությունն ամեն ձեւով պետք է տեր կանգնի մեր քվեներին»,- մեզ հետ զրույցում ասաց ռեժիսոր, իրավապաշտպան **Հովհաննես Իշխանյանը**: «Պարզ է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կեղծել է տվյալները՝ ոչ միայն կեղծել է, այլեւ սահմանադրական կարգի տապալում է եղել ժամը 02.00-ին, երբ որ կուսակցություններից մեկը դուրս է եկել ու իրեն հայտարարել հաղթած, երբ հազիվ քվեաթերթիկների 15%-ն էր մշակված: Այդ ժամանակ, հենց այդ պահին, կարծում եմ, արդեն բոլոր ուժերը, ոչ միայն ավանդական դիմադրության ուժերը, այլ նաեւ մյուսները, պիտի բոլորով գնային իրենց շտաբը, պատասխան պահանջեին, հեռացնեին, մի մասն էլ գնար Կենտրոնական ընտրական հանձնաժողով ու ասեր՝ այս ինչ ապօրինություններ են, ինց է դուրս գալիս ու իրեն հայտարարում հաղթած, երբ 10 տոկոսն է ընդամենը հաշված»,- նկատում է Իշխանյանը: Նա նշում է, որ exit pollերը ցույց են տվել, որ ՔՊ-ն պարտվում է, եւ հանկարծ ժամը 02.00-ից հետո սկսում է փոխվել արդյունքների գրանցման օրինաչափությունը: «Որովհետեւ օրինաչափությունն այն էր, որ 3 ուժերն առնվազն անցնում են՝ հաղթելով ՔՊ-ին, եւ, ամենայն հավանականությամբ, Թաթոյանն էլ էր անցնելու, այսինքն՝ 4 ուժով էին անցնելու: Հիմա այդ ժամը 2-ից հետո թե ինչ է եղել, արդեն էական չէ, բայց ենթադրում եմ, որ այդտեղ արդեն մի շանս բաց է թողնվել: Այդ մի շանսն էլ բաց թողնելուց հետո մենք եկանք հասանք այն կետին, որ ԲՀԿ-ի վրա են խաղում, որ չթողնեն ԱԺ, երեւի նաեւ պայմանավորվածություններ են փորձում ձեռք բերել, շանտաժներ են անում, ու արդեն մեր հաղթանակից մի նշաձող իջավ: Հիմա մտածում ենք՝ ԲՀԿ-ն անցնի, թե չանցնի, ու այն պարագայում, երբ մենք հաղթել ենք: Բոլորս պետք է զբաղվեինք ԲՀԿ-ի հարցերով, հետո պարզվեց, որ 18 հազար հոգանոց գաղտնի ցուցակ կա, ու ԿԸՀ-ն իր համար հանգիստ նստած է, ինչ-որ գաղտնի ցուցակ են բերում... պատկերացնո՞ւմ եք, հաջորդ ընտրություններին կարող են միլիոն հոգանոց գաղտնի ցուցակ բերել, որովհետեւ այդ գաղտնի ցուցակը որեւէ ձեւով, ինչ-որ իրավական ակտերով կարգավորված չէ, լրիվ անակնկալ է բոլորիս համար, ու նախորդ ընտրություններում էլ չի եղել նման բան»,- շեշտեց Իշխանյանը:

Իրավապաշտպանը կարծում է, որ փոխանակ ընդդիմությունից գողացված հաղթանակը հետ բերվեր, քննարկում են մանդատների հարցը, ինչը պառակտում է մտցնելու թե՞ քաղաքական ուժերի, թե՞ հանրության շրջանում: «Կարծիքները տարբերվելու են իրարից, ու սկսելու են իրար հետ վիճել, բայց այնտեղ խնդիր կա, որ մեր հաղթանակը գողացել են: Եթե մենք չենք գնում մեր հաղթանակը գողանալու համար միասնաբար պայքարելու... չգիտեմ՝ գոռգոռալու, խոսելու, հարցազրույցներ տալու, բնականաբար, ինչքան իջեցնենք նշաձողը, այնքան պառակտվելու ենք: Դրա համար, իմ կարծիքով, այս պահին դիմադրության ուժերը պետք է կենտրոնանան քաղաքացիների քվեները պաշտպանելու, ԲՀԿ-ին պաշտպանելու, մանավանդ որ Անդրանիկ Թեւանյանին ապօրինի կալանավորել են հենց այս խաղերի համար, եւ այս պահին չպետք է քննարկվի մանդատներ վերցնել-չվերցնելու հարցը»,- պնդում է մեր զրուցակիցը:

Իշխանյանը համոզված է, որ այս պահին անհրաժեշտ է ԿԸՀ-ից պահանջել 18 հազար անձի գաղտնի ցուցակը, ինչը կարգավորված չէ որեւէ իրավական ակտերով: «Անցած անգամ ընտրողների տարբերությունը հարյուրքանիս է եղել, որը տեխնիկական վրիպակ է, բայց այս անգամ 18 հազար է եղել, ու իրենք էլ իրենց բերանով ասում են՝ գաղտնի ցուցակ կա: Նոր հասկացություն են բերել-մտցրել ընտրությունների մեջ ու ինչ ուզում՝ անում են: Մի տոկոսից ավել է, փաստորեն, այդ ցուցակը: Պետք է բացատրել բոլորին, որ ընտրությունները կեղծված են, գողացված են, եւ չտխրել, չընկճվել ամեն քվեի համար»,- եզրակացրեց Հովհաննես Իշխանյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԻՆՉՊԻՍԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՑԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երիտասարդական ակումբների դաշնության «Արդար քվե» դիտորդական առաքելությունը հետեւել է հունիսի 7-ի ընտրություններին եւ իր եզրակացությունը ներկայացրել:

Մենք մի քանի հարց ուղղեցինք առաքելության հանրային կապերի ղեկավար **Աստղիկ Ավետիսյանին**:

- Երիտասարդական ակումբների դաշնության «Արդար քվե» դիտորդական առաքելությունը քանի՞ խախտում է արձանագրել ընտրությունների ժամանակ:

- Մեր դիտորդական առաքելությունը ընտրությունների ամբողջ ընթացքում ստացել եւ արձանագրել է տասնյակ ահազանգեր ու խախտումների վերաբերյալ տեղեկություններ՝ տարբեր ընտրատեղամասերից: Դրանք վերաբերում էին ընտրողների նկատմամբ ազդեցության փորձերին, ուղղորդումներին, դիտորդների աշխատանքի խոչընդոտմանը, քարոզչության արգելքի հնարավոր խախտումներին, վարչական ռեսուրսի օգտագործման դեպքերին, ինչպես նաեւ՝ ընտրական գործընթացի կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրների: Բոլոր դեպքերը փաստաթղթավորվել են, եւ բազմաթիվ դիմում-բողոքներ ուղարկվել են ԿԸՀ:

Միեւնույն ժամանակ, մեր առաքելության կարեւորագույն ձեռքբերումներից էր երիտասարդների ակտիվ ներգրավվածությունը ժողովրդավարական գործընթացներում: «Արդար քվե» նախաձեռնության շրջանակում ավելի քան 360 երիտասարդ դիտորդներ իրականացրել են ընտրական գործընթացի մշտադիտարկում՝ դառնալով ոչ միայն դիտորդներ, այլեւ քաղաքացիական պատասխանատվության եւ մասնակցային ժողովրդավարության կրողներ:

Մենք համոզված ենք, որ ազատ եւ արդար ընտրությունների հիմքում ոչ միայն վերահսկողությունն է, այլեւ քաղաքացիական կրթությունը: Այդ պատճառով մեր աշխատանքը սահմանափակված չէր միայն խախտումների արձանագրմամբ. այն նաեւ ուղղված էր երիտասարդների ընտրական գիտելիքների, իրավագիտակցության եւ հանրային գործընթացներին մասնակցության մշակույթի ձեւավորմանը: Առաքելության կարեւոր նորարարություններից էր Երիտասարդական ակումբների դաշնության կողմից ստեղծված youthvote.live առցանց հարթակը, որը հնարավորություն տվեց իրական ժամանակում հավաքագրել, քարտեզագրել եւ հանրայնացնել ընտրական գործընթացին վերաբերող ահազանգերն ու դիտարկումները: Այս գործիքը ոչ միայն բարձրացրեց գործընթացի թափանցիկությունը, այլեւ ստեղծեց քաղաքացիների, դիտորդների եւ մեդիայի միջեւ արագ հաղորդակցության արդյունավետ միջավայր՝ նպաստելով ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողության ամրապնդմանը:

- Այդ խախտումներն արձանագրելով՝ ի՞նչ քայլեր կարող եք ձեռնարկել:

- Մեր առաքելության հիմնական գործառույթը խախտումների անկախ դիտարկումն ու փաստագրումն է: Արձանագրված դեպքերի վերաբերյալ մենք ներկայացնում ենք դիմումներ եւ հաղորդումներ համապատասխան կառույցներին, պահանջում ենք իրավական գնահատական եւ հրապարակայնացնում ենք մեր եզրակացությունները: Միաժամանակ, ընտրություններից հետո պատրաստվում է ամփոփ զեկույց, որը ներառում է ինչպես արձանագրված խնդիրները, այնպես էլ ընտրական գործընթացի բարելավման վերաբերյալ առաջարկություններ:

- Միջազգային դիտորդները չե՞ն արձանագրել դրանք:

- Տարբեր դիտորդական առաքելություններ գործում են տարբեր մեթոդաբանություններով եւ ունեն դիտարկման տարբեր ծավալներ: Հնարավոր է, որ որոշ դեպքեր արձանագրված լինեն նաեւ միջազգային դիտորդների կողմից, որոշ դեպքեր՝ միայն տեղական դիտորդների: Կարեւոր է հասկանալ, որ առանձին խախտման արձանագրումը կամ չարձանագրումն ինքնին չի նշանակում, որ այն տեղի չի ունեցել կամ տեղի է ունեցել: Յուրաքանչյուր առաքելություն ներկայացնում է իր դիտարկումների շրջանակում հավաքագրված տվյալները: Մենք շահագրգիռ ենք հավասարության եւ արդարության սկզբունքը պահելու հարցում:

- Փաշինյանն ինչպե՞ս հաղթեց ընտրություններում, կան տեսակետներ, որ բազմաթիվ ընտրակեղծարարություններ են եղել:

- Երիտասարդական ակումբների դաշնության «Արդար քվեն» քաղաքական ուժերի ընտրական արդյունքների վերաբերյալ քաղաքական գնահատականներ չի տալիս, սակայն կարող է խոսել այն միջավայրի մասին, որում անցկացվել են ընտրությունները: Մեր դիտորդական առաքելության կողմից հավաքագրված տվյալները եւ youthvote.live կամ արդար.հայ հարթակում հրապարակված ահազանգերը վկայում են, որ ընտրական գործընթացը տեղի է ունեցել մի շարք համակարգային խնդիրների պայմաններում: Հարթակում արձանագրվել են հարյուրավոր հաղորդումներ, որոնց զգալի մասը վերաբերում էր վարչական ռեսուրսի օգտագործմանը, ապօրինի քարոզչությանը, ատելության եւ թշնամանքի խոսքին, ինչպես նաեւ՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հնարավոր ճնշման դեպքերին:

Մեր նախնական գնահատմամբ, առավել մտահոգիչ էին հետեւյալ երեւույթները.

• Վարչական ռեսուրսի լայնածավալ օգտագործման վերաբերյալ բազմաթիվ հաղորդումները, երբ պաշտոնատար անձանց կարգավիճակը կամ պետական համակարգի հնարավորությունները, ըստ ահազանգերի, օգտագործվել են քաղաքական նպատակներով: Այս խնդիրն արձանագրվել է նաեւ մեր միջանկյալ զեկույցներում:

• Ատելության խոսքի եւ հասարակության բեւեռացման խորացումը: Քարոզարշավի ընթացքում քաղաքական մրցակցությունը հաճախ տեղափոխվել է փոխադարձ վիրավորանքների, պիտակավորումների եւ թշնամանքի դաշտ, ինչը բացասաբար է ազդել ընտրողների ազատ կամարտահայտման միջավայրի վրա:

• Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքի հետ կապված խնդիրները: Մեր դիտորդները բազմաթիվ դեպքերում արձանագրել են ընտրական օրենսդրության ոչ լիարժեք իմացություն, ընթացակարգերի ոչ միատեսակ կիրառում, ինչպես նաեւ՝ որոշ տեղամասերում կազմակերպչական թերություններ:

• Քաղաքական ուժերի վստահված անձանց եւ ներկայացուցիչների վարքագիծը: Արձանագրվել են դեպքեր, երբ վստահված անձինք դուրս են եկել իրենց լիազորությունների շրջանակից, ներգրավվել են վիճաբանությունների մեջ կամ փորձել են ազդել ընտրողների վարքագծի վրա: Նման երեւույթները, անկախ քաղաքական պատկանելությունից, հակասում են ազատ եւ մրցակցային ընտրությունների սկզբունքներին:

• Ընտրողների նկատմամբ ճնշման, ուղղորդման կամ հոգեբանական ազդեցության փորձերի վերաբերյալ ահազանգերը: Դրանց թվում եղել են նաեւ հաղորդումներ մասնակցության վերահսկման, ցուցակագրման եւ ընտրողների որոշումների վրա ազդելու փորձերի մասին:

Միաժամանակ, մենք մտահոգությամբ արձանագրել ենք հանրային խոսույթում տարածված այն մոտեցումները, որոնց շրջանակում արտերկրում բնակվող կամ Հայաստանից երկար ժամանակ բացակայած քաղաքացիները, ինչպես նաեւ Հայաստանի ներսում ապրող քաղաքացիները, փոխադարձաբար արժանացել են նսեմացնող եւ վիրավորական վերաբերմունքի: Ժողովրդավարական ընտրությունների հիմքում ընկած է յուրաքանչյուր քաղաքացու հավասար արժանապատվությունը, եւ որեւէ ընտրող չպետք է ենթարկվի խտրական վերաբերմունքի իր բնակության վայրի, քաղաքական հայացքների կամ ընտրության պատճառով:

Ուստի, եթե հարցը ձեւակերպվում է՝ «ինչպես հաղթեց այս կամ այն քաղաքական ուժը», ապա դիտորդական առաքելության տեսանկյունից առավել կարեւոր հարցն այն է, թե որքանով էր ընտրական միջավայրը հավասար, ազատ, մրցակցային եւ զերծ անհարկի ազդեցություններից: Այդ հարցերի վերջնական գնահատականը կներկայացվի մեր ամբողջական զեկույցում՝ բոլոր փաստերի եւ արձանագրված խախտումների համապարփակ ուսումնասիրությունից հետո:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ՏՂԱՄԱՐԴԻԿ». ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԻՆՈՆԿԱՐ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

1982 թվականին էկրան բարձրացած «Տղամարդիկ» կինոնկարը մեկն է խորհրդային կինոարվեստի ժառանգության այն օրինակներից, որը մինչ այսօր էլ դեռ շարունակում է պահպանել իր ակտուալությունն ու գրավչությունը եւ կարող է հետաքրքրել ոչ միայն զուտ խորհրդային նոստալգիա ունեցողներին: «Տղամարդիկ» կինոնկարը ժապավեն է մարդկային պատասխանատվության, բարոյական ընտրության եւ ընտանիքի մասին: Սյուժեի կենտրոնում հանքափոր Պավել Զուբովն է, որ տարիներ հետո իմանում է, որ այն կինը, որին ինքը մի ժամանակ շատ սիրել է, ողբերգական ճակատագիր է ունեցել: Նաեւ իմանում է, որ այդ կնոջ մահվանից հետո երեխաներ են որբացել, եւ այդ երեխաներից մեկը կարող է լինել իր հարազատ որդին: Պավելի առաջ ծանր որոշում է ծառանում՝ մնալ մի կողմո՞ւմ, թե՞ ստանձնել պատասխանատվություն այդ երեխաների հանդեպ: Նա ընտրում է խիզախություն, համբերություն եւ ոգու ուժ պահանջող բարդ տարբերակը: Առաջին հայացքից սա պարզ կենցաղային պատմություն է: Սակայն արտաքին պարզության ներքո մտորելու առիթներ տվող հարցեր կան ներկայացված: Եվ առաջին հարցն այս է, թե ինչ ասել է՝ լինել մարդ, եւ որն է մարդկայնությունը: Կինոնկարի ստեղծողները ցույց են տալիս, որ իրական տղամարդկությունը դրսեւորվում է ոչ թե բարձրագոչ խոսքերով եւ արտաքին ուժի ցուցադրությամբ, այլ՝ այլոց հանդեպ խնամք տանելու, սեփական պարտքը կատարելու եւ կայացված որոշումներին պատասխանատվությամբ մոտենալու մեջ: Կինոնկարին յուրահատուկ փայլ է հաղորդում դերասանական անկեղծ խաղը: Հերոսները կյանքից վերցված են, ճանաչելի: Նրանց ապրումներն արձագանքվում են դիտողի հոգում, առաջացնում էմոցիաներ նրանց մոտ՝ անպայման:Շատ տեսարաններ լեցուն են իրական էմոցիաներով, որոնք ստիպում են մտորել արժեքների, բարոյականության մասին: Պավել Զուբովի պատմությունն այն մարդկային պատմությունն է, որն այսօր էլ՝ կինոնկարի թողարկումից ավելի քան 4 տասնամյակ հետո, շարունակում է հուզել կինոդիտողին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ ԿԼԻՆԻ, ԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ Ո՞Չ ԱԴՐԲԵՋԱՆՆ Է ՈՐՈՇՈՒՄ, Ո՞Չ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հունիսի 8-ին Թուրքիայում հանդիպել են Թուրքիայի, Ադրբեջանի ու Վրաստանի արտգործնախարարները, որի արդյունքում ստորագրել

են Ստամբուլի հռչակագիրը: Հանդիպման օրակարգում է եղել եւ հայտարարության մեջ տեղ է գտել այն, որ առանձնահատուկ կարեւորություն են տալիս «Միջին միջանցքին» եւ վերահաստատում են իրենց անվերապահ աջակցությունը միմյանց սուվերենությանը, տարածքային ամբողջականությանը եւ սահմանների անձեռնմխելիությանը՝ հատուկ շեշտելով Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման կարեւորությունը: Փորձագետները կարծում են, որ սա Հայաստանի դեմ ուղղված քայլ է, Հայաստանի շահերին առնչվող հանդիպում ու պայմանավորվածություն, որին չի մասնակցում Հայաստանը: Այսպես կոչված՝ Հայաստանի հարցերը մեր հարեւան երկրները քննարկում են, առանց ՀՀ ներկայացուցչի մասնակցության, եւ սա մեր պետության ինքնիշխանության իրական վիճակի մասին ամենախոսուն փաստն է:

Քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով ստորագրված փաստաթղթին, որտեղ խոսք է գնում ՀՀ տարածքով անցնող ճանապարհի մասին, սակայն Հայաստանը ներկա չէ, նշեց, որ եթե Հայաստանի մասնակցությունն այնտեղ պաշտոնապես չկա, ուրեմն ընդունված որեւէ որոշում բացարձակապես անիմաստ է եւ որեւէ ուժ չի կարող ունենալ: «Այլ հարց է, որ իրենք համարում են, որ ԹՐԻՓՓ-ի համաձայնագրով արդեն Հայաստանն այդ տարածքի վրա լիարժեք ինքնիշխանություն չունի: Իրենք համարում են, որ այդտեղ երրորդ կողմերի ներգրավումը, որն ապահովելու է ԹՐԻՓՓ-ի զարգացման կազմակերպությունը, որի 74 տոկոսն ամերիկյան է, իրենց հիմքեր է տալիս այդ թեման քննարկել առանց Հայաստանի մասնակցության: Այսինքն, սա խոսում է այն մասին, որ Հայաստանի իշխանությունները գործնականում զիջել են սուվերենիտետը Սյունիքի այդ հատվածի նկատմամբ: Պարզապես հետո ասելու են՝ դե, մենք Ադրբեջանին չենք հանձնել, Միացյալ Նահանգներին ենք հանձնել»,- ասաց Բաղդասարյանը: Այս իշխանությունները ժամանակին ասում էին, որ Արցախն Ադրբեջանին չենք հանձնել՝ ռուս խաղաղապահներին ենք հանձնել, ու նրանք էլ պատասխանատու են: ԹՐԻՓՓ-ի դեպքում էլ նույն սցենարը կգործի՝ նույնը կասեն ԹՐԻՓՓ-ի մասին, կասեն՝ մենք ԱՄՆ-ին ենք հանձնել, երրորդ կողմին, մենք Ադրբեջանին չենք հանձնել:

«Ահա, այս իրողությունը հաշվի առնելով է, որ այդ հարցը քննարկում են առանց Հայաստանի մասնակցության: Բայց ես կարծում եմ, որ շտապում են, որովհետեւ, ամեն դեպքում, որեւէ փաստաթուղթ իրավական ուժ ունենալ չի կարող, եթե դրան չի մասնակցում այն երկիրը, որի ինքնիշխան տարածքի մասին է խոսքը»,- ասաց Բաղդասարյանը: Հաշվի առնելով նաեւ ԱՄՆ-Իրան պատերազմը, ինչ է սպասվում Հայաստանին՝ ներկայիս իշխանությունների վարած քաղաքականության պայմաններում: Մեր զրուցակիցն ասաց, որ քանի դեռ հակամարտությունն այս կամ այն կերպ չի կարգավորվել, քանի դեռ հստակություն չկա Իրան-ԱՄՆ կոնֆլիկտում, հստակություն չի կարող լինել մեր տարածաշրջանում՝ Հարավային Կովկասում, եւ մենք չենք կարող հանգիստ լինել: «Եվ ոչ միայն մենք, միշտ նույնպիսի սպառնալիքներ, վտանգներ կարող են կախված լինել նաեւ Ադրբեջանի եւ Վրաստանի գլխին, այլ հարց է, որ Հայաստանն այս իրավիճակում պիտի հնարավորինս զգույշ եւ խոհեմ վարվի, որովհետեւ ամենաթույլ եւ խոցելի օղակն է, որովհետեւ ցանկացած ցնցում, այսպես թե այնպես, ազդելու է Հայաստանի վրա առաջին հերթին: Դա կարող է լինել տնտեսական ազդեցություն, դա կարող է լինել նաեւ անվտանգային, ռազմական ազդեցություն, բայց խոսքն ամբողջ տարածաշրջանի մասին է: Քանի դեռ այնտեղ հստակություն չկա, անիմաստ է ակնկալելը, թե մեր տարածաշրջանում ստեղծված այս փխրուն հավասարակշռությունը կարելի է խաղաղություն անվանել: Այդ խաղաղությունը ո՛չ Երեւանում է որոշվում, ո՛չ Բաքվում, այստեղ կլինի խաղաղություն, թե պատերազմ, ցավոք սրտի, դրսի մի քանի կենտրոններում է որոշվում»,- եզրափակեց Բաղդասարյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 11.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՈՒ Է ՀԱՔԱՆ ՖԻԴԱՆԸ ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Հայտնի է, որ հունիսի կեսերին, այսինքն՝ հաշված օրեր անց, Ռուսաստան է այցելելու Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանը: Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ նախատեսվում է քննարկել թե՛ երկկողմ, թե՛ միջազգային խնդիրներին վերաբերող հարցեր: Այցը տեղի կունենա հունիսի 15-17-ին, կկրի աշխատանքային բնույթ: Արդեն ռուսական կողմի հայտարարությունից կարելի է հասկանալ, որ Մոսկվան եւ Անկարան, բացի երկկողմ հարաբերություններին առնչվող հարցերից, կանդրադառնան նաեւ Մերձավոր Արեւելքի, Հարավային Կովկասի (ենթադրաբար՝ Հայաստանի), սեւծովյան ավազանի եւ Կենտրոնական Ասիայի ռեգիոնների հետ կապված հարցերին:

Россия сегодня-ի խորհրդական, արեւելագետ Թուրալ Քերիմովը Вестник Кавказа-ի հետ զրույցում անդրադարձել է կայանալիք այդ այցին եւ օրակարգային հարցերին: Քերիմովն ասել է, որ իրականում բավականին շատ հարցեր կան կուտակված Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում եւ նաեւ միջազգային ասպարեզում, որոնք անհրաժեշտ է քննարկել արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների մակարդակով: Առաջին հերթին դա երկու երկրների միջեւ էներգետիկ համագործակցության հետագա զարգացման հեռանկարային հարցն է, «Աքույու» ԱԷԿ-ի նախագիծը, որն իրականացնում է Росатом-ը: Միջազգային օրակարգի հարցերից անպայման կողմերը քննարկելու են Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության կարգավորման հնարավորությունը, բանակցությունների վերսկսման հեռանկարները, նաեւ՝ սեւծովյան ավազանի հետ կապված հարցերը:

Հաջորդիվ արդեն Մերձավոր Արեւելքն է՝ Իսրայել-Պաղեստին հարցերի շրջանակը, որին ավելացել է նաեւ իրանական ճգնաժամի հետ կապված ողջ հարցերի ներկապնակը: Չի բացառվում, որ քննարկվեն առաջիկայում երկու նախագահների՝ Պուտինի եւ Էրդողանի հանդիպման հնարավորությունները: Հատկապես որ, ըստ Քերիմովի դիտարկման, բավական երկար ժամանակ է, ինչ Մոսկվայի եւ Անկարայի միջեւ պետությունների ղեկավարների մակարդակում հանդիպում չի եղել: Դժվար է ասել, թե, օրինակ, Հարավային Կովկասի մասով նախարարներ Ֆիդանն ու Լավրովն ինչ են խոսելու, սակայն Հայաստանում ընթացող պրոցեսներին ինչ-որ կերպ անդրադարձ կատարվելու է: Հատկապես որ Հարավային Կովկասը հետաքրքրության գոտի է Թուրքիայի համար եւ ավանդաբար ազդեցության գոտի՝ Ռուսաստանի համար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արտերկրում աղրող հայերի համար փակել են ցուցակները

ԿԸՀ կայքում հրապարակվել են ընտրողների ստորագրած ցուցակները, որտեղ քաղաքացիները կարող են ստուգել՝ իրենց փոխարեն ինչ-որ մեկը քվեարկվե՞լ է, թե՝ ոչ: Այս ցուցակները տեղադրելու իմաստը հենց դա է՝ որ դրսում ապրող ՀՀ քաղաքացիները մտնեն եւ քվեարկված ցուցակներն ուսումնասիրելով պարզեն, թե իրենց փոխարեն որեւէ մեկն արդյոք չի՞ քվեարկել: Այս քայլի գլխավոր շահառուները Հայաստանից դուրս գտնվող անձինք են, որոնք չեն մասնակցել ընտրությանը: Երեկվանից բազմաթիվ քաղաքացիներ, ովքեր գտնվում են արտերկրում, ահազանգում են, որ ցուցակները չեն բացվում, հնարավոր չէ ստուգել տվյալները: Մենք ԿԸՀ մամուլի քարտուղար Սեդա Ղուկասյանից հետաքրքրվեցինք, թե ինչ խնդիր կա, ինչու ցուցակները չեն բացվում արտերկրում գտնվողների համար: ԿԸՀ խոսնակը տարօրինակ պատասխան տվեց, որ սա անվտանգային հարց է, կիբեռանվտանգության մարմինները որոշել են փակել ցուցակները: Եվ խորհուրդ տվեց՝ «այն մարդիկ, ովքեր կասկածներ ունեն, կարող են ՀՀ-ում գտնվողներին խնդրել՝ ստուգել իրենց տվյալները»: Հասկանալի չէ, թե 3 մլն մարդու համար հասանելի ցուցակներում ինչն է ԿԸՀ-ն անվտանգային հարց դիտարկել եւ նման սահմանափակում կիրառել: Բայց հասկանալի է, որ ցուցակները փակել են, որ մարդիկ դրսից չկարողանան պարզել՝ իրենց փոխարեն որեւէ մեկը քվեարկվե՞լ է, թե՞ ոչ:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am